

ՀՈՒՅՄ

لويس

LOUYS


Armenian Monthly

ISSN 1682-5446

Մշակութային և հասարակական ամսագիր

ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հունիսի 4, 1918թ.



Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Բաթումի պայմանագիր.....	1
3- Հայաստանի Հանրապետություն.....	2
4- Արևմտյան Հայաստան.....	17
5- Սփյուռք.....	19
6- Միջազգային.....	21
7- Հասարակական.....	22
8- Մշակույթ.....	23

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....0-2

Շապիկի առաջին էջում՝ «Մայիսյան»

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 224, Հունիս 2017 No. 224, June 2017

ماهنامه لویس - شماره ۲۲۴ تیر ماه ۱۳۹۶

Մշակութային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր ԵՆ գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Վահիկ Վարդանյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,
Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խելունյան
Փոստարկղ 15875-9488 Թեհրան - Իրան
Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Բաթումի պայմանագիրը

1918թ. ապրիլին Տրապիզոնում ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները մայիսի սկզբներին վերսկսվեցին Բաթումում: Թուրքերը մայիսի 26-ին վերջնագիր տվեցին անդրկովկասյան պատվիրակությանը: Բայց քանի որ հենց նույն օրը Անդրկովկասյան Հանրապետությունը կազմալուծվեց, ուստի նորահռչակ հանրապետություններից յուրաքանչյուրն ինքը պետք է լուծեր Թուրքիայի հետ պատերազմի և խաղաղության հարցը: Մայիսի 28-ին, Հայոց Ազգային խորհուրդը որոշեց նոր պատվիրակություն ուղարկել Բաթում և հաշտություն կնքել թուրքերի հետ: Նորանկախ Հայաստանի պատվիրակությունը գլխավորեց արտգործնախարար Ալեքսանդր Խատիսյանը: Հարկ է նշել, որ չնայած Մայիսյան հերոսամարտերին, այդուհանդերձ, մահացու վտանգը արևելահայության գլխից լիովին չէր վերացել: Բաթումում 1918թ. հունիսի 4-ին թուրքերի հետ Հայաստանի կողմից պայմանագիր ստորագրեցին ՀՅԴ-ականներ կայացրած Վերջին Բաթումի պայմանագրի հետ: Ալեքսանդր Խատիսյանը և ժողովրդական Միքայել Պապաջանյանը, իսկ թուրքերից՝ Խայի բեյն ու Վեհիբ փաշան: Պայմանագրի վերնագիրն էր՝ «Հաշտության և բարեկամության պայմանագիր Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև», այսօր կարող է որպես ծաղրանք ու հեզնանք հնչել այս «ուռապատրիտիզմի» անպատասխանատու ժամանակներում, սակայն այն դժնդակ օրերին չկար այրնտրանք: Այրնտրանքը կնշանակեր հրաժարում պետականությունից: Պայմանագրով Թուրքիային էր անցնում Արևմտեան Հայաստանը ամբողջապես և Արևելեան Հայաստանի գգայի մասը՝ Կարսի մարզը և 5 գավառ: Արդյունքում Հայկական Հանրապետությունը հաստատվեց 12 հազ. քառ. կմ տարածքի վրա: Ընդհանուր հաշվով հայ ժողովուրդը կորցրեց ողջ Արևմտյան Հայաստանն ու Արլ. աստանից 28 հազ. քառ. կմ տարածք: Այն ժամանակ հայ ժողովրդին առաջնորդում էին Քաջագունու նման խոհեմ ու պատմական պատասխանատվություն կրող գործիչներ: Շատերը, այդ թվում ՀՅԴ շրջանակներից, հրապարակավ կամ իրենց մտքում, նրան համարում էին դավաճան, այդ թվում նաև Անդրանիկը, ով Հանրապետության ծնունդը համարեց ապօրինի՝ թուրքերի ստեղծած: Մինչդեռ Քաջագունին ոչ միայն պետական մտածելակերպով գործիչ էր, այլև իսկական հայր, ով իր որդիներին չէր թաքցնում հեռուներում. նրա որդիներից մեկը գոհվեց 1918թ. հայ-թուրքական պատերազմում, մյուսը՝ 1920թ. հայ-թաթարական բախումների ժամանակ: Չնայած համատարած մեղադրանքներին ու հակադիր տեսակետներին՝ վարչապետ Քաջագունին համոզված էր, որ Հայաստանը պետք է կատարի այդ պայմանագրի դրույթները և միջպետական հարաբերություններ պահպանի Օսմանյան կառավարության հետ: Ժամանակը շատ արագ եկավ փաստելու, որ առանց ռազմական հաղթանակի ձեռք բերված քաղաքական հաջողություններն ընդհանրապես չեն դիմանում կյանքի քննությանը: Այդպիսին եղավ նաև Բաթումի Դաշնագրի նակատագիրը: Սարդարապատի մեջ ռազմականորեն պարտված Թուրքիան չէր կարող և չկարողացավ մնայուն բնույթ տալ Բաթումի Դաշնագրով իր ձեռք բերած քաղաքական հաջողությանը: Երբ 1918թ.ի հոկտեմբերին Մուդրոսի մեջ Դաշնակիցները խաղաղության դաշնագիր կնքեցին թուրքերի հետ, նորանկախ Հայաստանի Հանրապետությունը արդեն վերածվել էր հիսուն հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ պետականության: Բաթումի պայմանագիրը անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն է, որով Թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը:

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԸ
Բաթում, 4 հունիսի 1918 թ.



Օսմանյան կայսերական կառավարությունը՝ մի կողմից և իրեն անկախ հռչակած Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մյուս կողմից, փոխադարձաբար համաձայնվելով երկու կողմերի միջև հաստատել բարեկամական, բարիդրացիական հարաբերություններ՝ բարոյական, իրավաբանական, տնտեսական և մտավոր բնագավառներում, իրենց լիազորներ նշանակեցին հետևյալ անձնավորություններին.

Օսմանյան կայսրությունը

Դեպուտատ, արդարադատության մինիստր և պետական խորհրդի նախագահ, Նորին գերազանցություն Խալիլ բեյին՝ առաջին պատվիրակ, և

Կովկասյան ռազմաճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար, Նորին գերազանցություն գեներալ-լեյտենանտ Վեհիբ Մահմեդ փաշային՝ ռազմական պատվիրակ:

Հայկական Հանրապետությունը

Պարոն Ալ. Խատիսովին՝ պատվիրակության նախագահ.

Պարոն Ռուբեն Քաջազնունուն՝ պատվիրակ:

Պարոն Միքայել Պապաջանովին՝ պատվիրակ:

Սույն անձինք, ծանոթանալով երկու կողմերի լիազորություններին և գտնելով դրանք ըստ պատշաճի, համաձայնվեցին հետևյալ դրույթների վերաբերյալ:

Հոդված 1.

Օսմանյան կայսերական կառավարության և Հայկական Հանրապետության կառավարության միջև հաստատվում են հաշտություն և մշտական բարեկամություն:

Հոդված 2.

Ներքոհիշյալ ուղղությունն ունեցող սահմանագիծը բաժանում է Օսմանյան կայսրությունը Վրաստանի Հանրապետությունից, Հայաստանի Հանրապետությունից և Ադրբեջանի Հանրապետությունից:

Սահմանն սկսվում է այն կետում, որտեղ Ճորոխ գետը թափվում է Սև ծովը, և մինչև Շավնաբաղ սարը միաձուլվում է հին սահմանի հետ, որ գոյություն ուներ Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև՝ մինչև 1877 թ. պատերազմը, անցնելով լեռնագագաթների գծով՝ այն հասնում է Խալիսամ և Մեյխակար սարերը (1856 թվականի սահմանով), ապա թեքվում է դեպի հարավ, անցնում է Փիրսաղաղ սարի գագաթով, Աբաթումանից երկու կիլոմետր հարավ և, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, հասնում է Կարխուլ-դաղի գագաթը, այստեղից սկզբում հինգ կիլոմետր ձգվելով դեպի հյուսիս-արևելք, և ապա դեպի հարավ-արևելք, այն հասնում է Գուրկել վայրը, անցնում է Քուր գետի վրայով՝ Աժխուրիից երկու կիլոմետր հարավ և, անցնելով Ղայաբաշի, Օրթաթափա, Ղարադայա սարերի գագաթների գծով, հասնում է Տաբիցկուրի լիճը՝ Մոլիտի վանքից անմիջականորեն հարավ: Սահմանն այդ լիճը կտրում է այնպես, որ օսմանյան տերիտորիայում է մնում լճի մի մասը, որը գտնվում է հարավում՝ ուղիղ գծով, որ Մոլիտի վանքի հարավից անմիջականորեն գնում է մինչև լճի հյուսիսային

վերջավորությունից մեկուկես կիլոմետր հարավ-արևելք՝ հակադիր ափին գտնվող կետը, և հասնում է Թավկոտեղի սարը: Սահմանն սկսվում է այն կետում, որտեղ Ճորոխ գետը թափվում է Սև ծովը, և մինչև Շավնաբաղ սարը միաձուլվում է հին սահմանի հետ, որ գոյություն ուներ Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև՝ մինչև 1877 թ. պատերազմը, անցնելով լեռնագագաթների գծով՝ այն հասնում է Խալիսամ և Մեյխակար սարերը (1856 թվականի սահմանով), ապա թեքվում է դեպի հարավ, անցնում է Փիրսաղաղ սարի գագաթով, Աբաթումանից երկու կիլոմետր հարավ և, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, հասնում է Կարխուլ-դաղի գագաթը, այստեղից սկզբում հինգ կիլոմետր ձգվելով դեպի հյուսիս-արևելք, և ապա դեպի հարավ-արևելք, այն հասնում է Գուրկել վայրը, անցնում է Քուր գետի վրայով՝ Աժխուրիից երկու կիլոմետր հարավ և, անցնելով Ղայաբաշի, Օրթաթափա, Ղարադայա սարերի գագաթների գծով, հասնում է Տաբիցկուրի լիճը՝ Մոլիտի վանքից անմիջականորեն հարավ: Սահմանն այդ լիճը կտրում է այնպես, որ օսմանյան տերիտորիայում է մնում լճի մի մասը, որը գտնվում է հարավում՝ ուղիղ գծով, որ Մոլիտի վանքի հարավից անմիջականորեն գնում է մինչև լճի հյուսիսային վերջավորությունից մեկուկես կիլոմետր հարավ-արևելք՝ Այնուհետև այն իջնում է դեպի հարավ, անցնում Շավնաբաղ, Կարազուգու, Սամսար սարերի գագաթներով և, թեքվելով դեպի արևելք, անցնում է Դավազիրան լեռնաշղթայի գագաթներով, ապա ուղղվում է դեպի հարավ անցնելով Աչրիբար, Բաշգիրան, Նուրառահման սարերի գագաթներով: Նուրառահման սարից հետո այն շարունակում է գնալ հարավային ուղղությամբ և շարունակ անցնելով լեռնագագաթների գծով, հանդիպում է Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղագծին՝ Աղբուլաղ բնակավայրից հինգ կիլոմետր արևմուտք. այստեղից այն անցնում է լեռնագագաթներով մինչև Խանվալի վայրը, որտեղից համարյա ուղիղ գծով հասնում է Ալազյազ լեռան առավել բարձր գագաթը և, շարունակելով գնալ ուղիղ գծով, հասնում է Էջմիածին-Մարդարապատ խճուղին՝ Էջմիածնից յոթ կիլոմետր արևմուտք գտնվող կետում, ապա այն շրջանցում է Էջմիածինը յոթ կիլոմետր տարածության վրա և շարունակում է գնալ Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթուղուն զուգահեռ ուղղությամբ, մնալով նրանից մոտ վեց կիլոմետր, իսկ Բաշգիրան վայրից դեպի հարավ-արևմուտք տասնվեց կիլոմետր հեռավորության վրա, այն հատում է այդ վայրից դեպի երկաթուղին տանող ճանապարհը, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է Աշաղի-Ղարաբաղյար գյուղի մոտով՝ մեկ կիլոմետր հարավ և Շահաբուր, Ղարախաչի, Աշաղի-Չանախչի բնակավայրերի վրայով հասնում է Էլփին-չայ գետը, որով գնում է մինչև Արփա բնակավայրը, այս վերջին բնակավայրից սկսած այն մտնում է Արփաչայի հովիտը, հասնում է Ղայալու բնակավայրը և Ղաիդ գետով գնում է մինչև Աղթաբան սարի գագաթը, ապա այն անցնում է Ղարադուրան, Արաջին, Ղարախաչի սարերի գագաթներով, հասնում է Ռեանկա-չայ գառիթափը, շարունակվում է այդ գետի հովտով Ագա բնակավայրի հարավային կողմից հասնելով Ալիջին բնակավայրը, որ գտնվում է նախկին ռուս-պարսկական սահմանագծի վրա: Սահմանագծի վերջնական որոշումը կկատարվի հենց տեղում, երկու կողմերի անդամներից կազմված հանձնաժողովի կողմից:

Հոդված 3.

Հայկական Հանրապետության կառավարության և Ադրբեջանի Հանրապետության կառավարության միջև կնքված, նրանց փոխադարձ սահմանների որոշմանը վերաբերող համաձայնագիրը կհաղորդվի Օսմանյան կայսերական կառավարությանը:

Հոդված 4.

Օսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում է գնեքի ուժով օգնություն ցույց տալ Հայկական Հանրապետության կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը կխնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստությունն ապահովելու համար:

Հոդված 5.

Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործունե կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ:

Հոդված 6.

Հայկական Հանրապետության մեջ ապրող մուսուլմանների կրոնն ու

սովորույթները կհարգվեն: Նորին կայսերական մեծությունը սուլթանի անունը կարտասանվի մուսուլմանների հանրային աղոթքներում: Նրանք կօգտվեն նույն քաղաքացիական և քաղաքական իրավունքներից, ինչ և ուրիշ կրոնների պատկանող քաղաքացիները: Մահմեդականները կարող են սովորել իրենց մայրենի լեզվով և իրենց կրոնի լեզվով:

Կրոնական պաշտամունքի և բարեգործության կատարումն ապահովելու նպատակով կարող են ստեղծվել մուսուլմանական համայնքներ, իբրև բարոյական օրգաններ, որոնք լիազորված կլինեն կառուցելու մզկիթներ, հոսպիտալներ, դպրոցներ, կրոնական ու բարեգործական հիմնարկներ և դրանց պահպանության համար ձեռք բերելու շարժական ու անշարժ գույք: Դրանք կկառավարվեն հատուկ կառավարիչների կողմից:

Գլխավոր մուֆթին կնստի Երևան քաղաքում՝ Հայկական Հանրապետության մայրաքաղաքում (գլխավոր քաղաքում), իսկ մյուս մուֆթիները կբնակվեն հանրապետության այլ վայրերում, որտեղ նրանց գտնվելը կհամարվի անհրաժեշտ:

Այս մուֆթիների փոխհարաբերությունները Շեյխ-ուլ-Իսլամաթի հետ, ինչպես և նրանց իրավունքներն ու պարտականությունները, սահմանված են սույն տրակտատին կցվող համաձայնագրում:

Հոդված 7.

Նկատի ունենալով, որ Օսմանյան կայսրության և Հայկական Հանրապետության միջև բացակայում են ամեն տեսակի պայմանագրեր, կոնվենցիաներ, համաձայնագրեր, ակտեր, հրահանգներ և այլ միջազգային փաստաթղթեր, երկու պայմանավորված կողմերը համաձայնվեցին կնքել հյուպատոսական կոնվենցիա, առևտրական պայմանագիր և այլ ակտեր, որոնք նրանք անհրաժեշտ կհամարեն իրենց իրավաբանական և տնտեսական հարաբերությունները կարգավորելու համար: Հյուպատոսական կոնվենցիան կկնքվի երկու տարվա ընթացքում՝ սույն տրակտատի վավերացումից և փոխանակումից անմիջապես հետո:

Այդ անցման ժամանակաշրջանում գլխավոր հյուպատոսները, հյուպատոսները և փոխհյուպատոսները համապատասխանաբար կօգտվեն նրանց արտոնությունների ու պաշտոնների նկատմամբ առավել բարենպաստող ազգի դրույթունից, ընդհանուր միջազգային իրավունքի հիման վրա, փոխադարձության սկզբունքներով: Ընդհանուր միջազգային իրավունքի հիման վրա առևտրական պայմանագիր կնքելու համար բանակցությունները կսկսվեն այն բանից անմիջապես հետո, երբ ընդհանուր հաշտություն կկնքվի մի կողմից՝ Թուրքիայի և, մյուս կողմից՝ նրա հետ պատերազմի վիճակի մեջ գտնվող պետությունների միջև: Մինչև այդ, համենայնդեպս մինչև 1919 թ. դեկտեմբերի 3-ը, սույն պայմանագրի հավելվածով սահմանված ժամանակավոր դրույթը կկիրառեն երկու կողմերն էլ: Այն կարող է չեղյալ հայտարարվել՝ սկսած 1919 թվականի հունիսի 30-ից և ուժի մեջ կմտնի վեց ամիս հետո:

Յամաքային հաղորդակցությունը կսկսվի սույն պայմանագրի վավերացումից և փոխանակումից հետո:

Հոդված 8.

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են փոխադարձաբար թույլ տալ ամեն հնարավոր թեթևացում երկաթուղային տրանսպորտի նկատմամբ, սահմանելով ու կիրառելով իջեցված տարիֆներ: Մասնավորապես, երկաթուղիների կառուցման, շահագործման ու պահպանման, կամ այլ ամեն տեսակի հասարակական աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի տեղափոխման նկատմամբ կկիրառվեն հատուկ իջեցված տարիֆներ:

Պայմանավորվող կողմերի միջև երկաթուղային գծերի շարժակազմի փոխանակումը կկատարվի այդ հարցի վերաբերյալ սահմանված միջազգային սկզբունքներով:

Պայմանավորվող կողմերն անհապաղ կմտնեն բանակցությունների մեջ՝ նախորդ դրույթների մանրամասնությունները որոշելու համար:

Հոդված 9.

Մինչև Հայկական Հանրապետության՝ Միջազգային փոստ-հեռագրական միության մեջ մտնելը, Օսմանյան կայսրության և Հայկական Հանրապետության միջև փոստային և հեռագրական կապերը կվերականգնվեն նույն պայմանագրի վավերացումից ու փոխանակումից հետո, Միջազգային Միության փոստային ու

հեռագրական կոնվենցիաների, համաձայնագրերի ու ռեգլամենտների կանոնադրություններով:

Հոդված 10.

Պայմանավորվող կողմերից մեկի տերիտորիայի բնակիչները կամ համայնքները, որոնք ունեն սեփականության և օգտագործման իրավունք սահմանի մյուս կողմում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, կարող են օգտագործել դրանք, շահագործել կամ վարձակալության տալ, վարել կամ վաճառել անձամբ կամ վստահված անձանց միջոցով: Ոչ ոք չի կարող զրկել այդ անշարժ գույքի նկատմամբ իրեն պատկանող սեփականության իրավունքից այլ կերպ, քան նկատի ունենալով հասարակական շահը, և միշտ փոխհատուցմամբ:

Ոչ մի արգելք չպետք է հարուցվի բնակիչներին կամ նշված համայնքների ներկայացուցիչներին, երբ նրանք սահմանը կանցնեն՝ ներկայացնելով ճանապարհային թերթիկները, որոնք կտրվեն ըստ բնակավայրի համապատասխան իշխանությունների կողմից:

Թեթևացումներ ու հատուկ արտոնություններ կտրվեն սահմանն անցնելու և սահմանային բնակավայրում առևտուր անելու համար: Նախորդ դրույթների մանրամասնությունները կկարգավորվեն ըստ սույն պայմանագրի 11-րդ հավելվածի:

Հոդված 11.

Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագրի ստորագրումից հետո Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը, ինչպես և ապահովվել, որ այդ էվակուացումը առիթ չտա որևէ ընդհարման:

Հոդված 12.

Բրեստ-Լիտովսկում Օսմանյան կայսրության ու նրա դաշնակիցների և Ռուսաստանի միջև կնքված հաշտության ընդհանուր և լրացուցիչ պայմանագրերի դրույթները, որքանով որ դրանք չեն հակասում ներկա պայմանագրին, ուժի մեջ են պայմանավորվող կողմերի համար:

Հոդված 13.

Սույն պայմանագրով որոշվող տերիտորիաների սահմաններից դուրս գտնվող գործերը կէվակուացվեն պայմանագրի կնքումից հետո:

Հոդված 14.

Սույն պայմանագիրը կվավերացվի և վավերացված օրինակների փոխանակումը կկատարվի Կ.Պոլսում, մեկ ամսվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե դա հնարավոր կլինի: Այն ուժի մեջ կմտնի այդ փոխանակման օրից:

Հաստատումն արա՝ լիազորված անձինք ստորագրեցին հաշտության ու բարեկամության սույն պայմանագիրը և դրեցին իրենց կնիքները: Ստորագրեցին՝ Խալիլ, Ա. Խատիսով Վահիբ Ռ. Քաջագունևի Մ. Պապաջանով (Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական արխիվ, Ֆ. 68/200, գ. 11, թթ.99-100)

Հայաստանի Հանրապետություն Հայ Էքսպեդիտոր. Դեպի Ռուսաստան Աբխազական միջանցքը իրական է, ինչպես



Եթե քննարկվի Հայաստանից Ռուսաստան Աբխազիայի տարածքով ապրանքների տեղափոխման հարցը, ապա տեխնիկապես դա հնարավոր է կազմակերպել: Այս մասին հունիսի 6-ին լրագրողների հետ զրույցում ասել է «Ապավեն» Էքսպեդիտորային ընկերության տնօրեն Գագիկ Աղաջանյանը:

Տեխնիկապես գործընթացը կարելի է իրականացնել հեղինակային միջնորդի հետ : Այդ գործում մեծ փորձ ու վստահություն են վաստակել շվեյցարական ընկերությունները: Նրանք կարող են ընդունել բեռնատարը կամ երկաթգծային վագոնը վրացական մաքսայիններից Ինգուրի սահմանային գետի վրա, այն տեղափոխել Արխագիայի տարածքով, իսկ Պսոու գետի վրա, որը սահմանակից է արդեն Ռուսաստանի հետ, այն հանձնել Ռուսաստանի մաքսայիններին:

Եթե բեռների հարցում օգնի այդպիսի հեղինակավոր միջնորդ, մաքսանենգության կամ անվտանգության հարցերում կասկածներ չեն ծագի, համարում է Ադաջանյանը:

Ի օգուտ արխագական միջանցքի է խոսում շահագրգիռ կողմերի քանակը, որն ավելի է շատանում: Ապրանքային ուղիները ձգտում է դիվերսիֆիկացնել Թուրքիան, նաև ինքը Ռուսաստանը, հավելեց նա:

«Հիմա այդ տարբերակն ավելի իրական է, քան երբեք: Ես երբեք դա չեմ ասել ու հիմա առաջին անգամ եմ ասում», - հավելել է Ադաջանյանը:

Նկատենք, որ Արխագիայի տարածքով ճանապարհը շորջ տարին գործում է ի տարբերություն Վերին Լարսի անցակետի վրաց- ռուսական սահմանին, որը ենթակա է սողանքների, իսկ ձմռանը՝ ձյան պատճառով է անանցանելի դառնում:

Երեւանում կցուցադրվի հայերի կոտորածների մասին պատմող թուրքական նոր ֆիլմ



Երեւանում հունիսի 7-ին ցուցադրվելու է հայերի կոտորածների մասին պատմող թուրքական «Վանքի երեխաները» ֆիլմը: Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանում ում «Արեւմտահայոց ազգային համագումար»-ի լիազոր ներկայացուցիչ եւ «Վերադարձ» հիմնադրամի նախագահ Արագած Ախոյանը:

Իր խոսքում Արագած Ախոյանը նշեց, որ «Արեւմտահայոց ազգային համագումար» միջազգային ոչ կառավարական կազմակերպության մշակույթի հանձնաժողովը նախաձեռնել է Հայոց ցեղասպանության եւ դրա հետեւանքների մասին թուրք հեղինակների՝ պրոդյուսեր Քազըմ Գյունդողանի եւ ռեժիսոր Նեզահաթ Գյունդողանի նկարահանած ֆիլմի երեւանյան ցուցադրությունը, որը կկայանա «Մոսկվա» կինոթատրոնում:

«Բազմիցս, տարիներ շարունակ «Վերադարձ» հիմնադրամը տարբեր մշակութային ծրագրեր է իրականացրել եւ այսօր այս առումով ունենք երկու միջոցառում: Մեկը լինելու է վաղը՝ Մոսկվա կինոթատրոնում ժամը 18:00 կցուցադրվի «Վանքի երեխաները» ֆիլմը», - ասաց Ախոյանը՝ շեշտելով, որ 1 ժամ տևողությամբ ֆիլմը պատմում է ցեղասպանության ժամանակ տարբեր ճանապարհներով փրկված եւ քրդերի ու թուրքերի մեջ մեծացած հայ երեխաների մասին:

Իր հերթին ֆիլմի պրոդյուսեր Քազըմ Գյունդողանը նշեց, որ Թուրքիայում մինչ օրս էլ շարունակվում է ժխտողական քաղաքականությունը կապված այդ երկրում 20-րդ դարում

տեղի ունեցած բազմաթիվ ցեղասպանությունների հետ, որոնց զոհ են դարձել այդ երկրում ապրող բազմաթիվ ազգերի ներկայացուցիչները, այդ թվում նաև հայերը:

Տաջիկստանի նախագահը երկօրյա այցով Հայաստան է ժամանել



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի իրավերով այսօր՝ հունիսի 14-ին, երկօրյա այցով Հայաստան է ժամանել Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնը: «Չվարթինգ» օդանավակայանում նրան դիմավորել է արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էինք, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունը, այցի շրջանակներում նախատեսված են Տաջիկստանի նախագահի հանդիպումները ՀՀ բարձրագույն դեկավարության հետ:

Հանրապետության Նախագահի նստավայրում հայտաջիկական բարձր մակարդակի բանակցությունների ավարտին նախատեսվում է փաստաթղթերի ստորագրման արարողություն:

Նախագահներ Սերժ Սարգսյանը եւ Էմոմալի Ռահմոնը ՉԼՄ-ների առջև հանդես կգան բանակցությունների արդյունքներն ամփոփող համատեղ հայտարարությամբ:

Տաջիկստանի նախագահն այցելել է Ծիծեռնակաբերդ

14.06.2017



Երկօրյա այցով Հայաստան ժամանած Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնն այսօր՝ հունիսի 14-ին, այցելել է Ծիծեռնակաբերդ եւ հարգանքի տուրք մատուցել Հայոց մեծ եղեռնի Մուրք նահատակների հիշատակին: Նախագահ Ռահմոնը հուշահամալիրի Հիշողության պուրակում նաև ջրել է իր տնկած եղևնին:

Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էինք, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնության և տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունը, այցի շրջանակներում նախատեսված են Տաջիկստանի նախագահի հանդիպումները ՀՀ բարձրագույն ղեկավարության հետ:

Հանրապետության Նախագահի նստավայրում հայտաջիկական բարձր մակարդակի բանակցությունների ավարտին նախատեսվում է փաստաթղթերի ստորագրման արարողություն:

Նախագահներ Սերժ Սարգսյանը և Էմոմալի Բահմոնը ՉԼՄ-ների առջև հանդես կգան բանակցությունների արդյունքներն ամփոփող համատեղ հայտարարությամբ:

Ստեփանակերտում մեկնարկել է Հայկական կուսակցությունների երրորդ ֆորումը



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 16 հունիսի, ԱՐՑԱՆՊՐԵՍ: «Արցախայրես»-ի թղթակցի հաղորդմամբ՝ ֆորումին ողջույնի խոսքով հանդես է եկել ԱՀ նախագահ Բակո Սահակյանը՝ ասելով, որ քաղաքական նման համաժողովները լավ հարթակ են հայոց պետականաշինությանը, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը, համաշխարհային և տարածաշրջանային զարգացումներին վերաբերող տարբեր հարցեր քննարկելու և դրանց մասին ավելի խոր պատկերացում կազմելու համար:

«ԱՀ Նախագահն ընդգծել է, որ հայկական քաղաքական դաշտը ներկայացնող կուսակցություններն և ուժերը հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին կարողանում են միավորվել և միասնական ուժերով պաշտպանել ժողովրդի ու պետության շահերը՝ նման օրինակները համարելով հայոց պետականության կենսունակության հիմքերից: Քաղաքական ուժերն այդպիսի միասնականությամբ են հանդես գալիս հատկապես Արցախի ներկայի և ապագայի հետ կապված հարցերում: Այն, որ Արցախի Հանրապետությունը պետք է լինի հզոր, ժողովրդավարական պետություն, որը միշտ ի վիճակի կլինի ապահովել իր անվտանգությունը, համոզված եմ՝ հիմնարար սկզբունք է հայկական բոլոր քաղաքական ուժերի համար», - ընդգծել է Բ. Սահակյանը:

Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանն ընթերցել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը, որում մասնավորապես ասված է.

Լեւոն Արոնյանը՝ Norway Chess-ի հաղթող



Լեւոն Արոնյանը նվանեց Նորվեգիայի Ստավանգեր քաղաքում ավարտված Norway Chess սուպերմրցաշարի հաղթողի կոչումը՝ շախմատի պատմության մեջ մասնակիցների վարկանիշով ուժեղագույն մրցաշարը:

Վերջին տուրում Լեւոն Արոնյանը սեւերով մրցեց ամերիկացի Ուեսլի Սոի հետ և բավարարվեց ոչ ոքի արդյունքով՝ վաստակելով 6 միավոր: Առաջին տեղի համար հայ գրոսմայստերի միակ մրցակից, ամերիկացի Հիկարու Նակամուրան վերջին տուրում պարտվեց ամերիկացի Ֆաբիանո Կարուանային և մնաց երկրորդ տեղում՝ 5 միավոր: Արոնյանը միանձնյա գրավեց առաջին տեղը:

Այս մրցաշարում Լեւոն Արոնյանը հաղթանակներ տարավ աշխարհի չեմպիոն, նորվեգացի Մագնուս Կարլսեն, աշխարհի նախկին չեմպիոն, ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկի, աշխարհի չեմպիոնի նախկին հավակնորդ, ռուսաստանցի Սերգեյ Կարյակինի նկատմամբ, չկրեց ոչ մի պարտություն:

Նախորդ տարի Norway Chess-ում հաղթել էր աշխարհի չեմպիոն Մագնուս Կարլսենը, իսկ Լեւոն Արոնյանը գրավել էր երկրորդ տեղը:

Այս տարի մրցաշարի հաղթողի համար նախատեսված էր 70 հազար եվրո պարգև, երկրորդ տեղի համար՝ 40 հազար, երրորդ տեղի համար՝ 25 հազար եվրո:

Ռուսաստան-Ադրբեջան հարաբերություններում որոշակի բարդություններ են ստեղծվել. Դավիթ Շահնագարյան



Ռուսաստան-Ադրբեջան հարաբերություններում որոշակի բարդություններ են ստեղծվել: Այս մասին, այսօր՝ հունիսի 17-ին, Արցախում, «Հայկական կուսակցությունների երրորդ ֆորում»-ի նիստում «Մեր անվտանգությունը և համաշխարհային անվտանգային սպառնալիքները» թեմայով ելույթի ժամանակ նշել է ՀՀ Ազգային

անվտանգության ծառայության նախկին ղեկավար Դավիթ Շահնագարյանը, հաղորդում է «Արցախապրեք»:

Նրա խոսքով՝ Արցախի հիմնահարցը եւ, առաջին հերթին, դրա ռազմական բաղադրիչը շարունակվում են մեզ համար մնալ առաջնահերթ:

«Այսօր մեր երաշխիքը մեր սահմանների պաշտպանությունն է, եւ, իմ գնահատականով նոր լայնածավալ պատերազմի հավանականությունը վերջին երեք ամսում մի փոքր նվազել է, բայց ամեն վայրկյան պետք է պատրաստ լինենք: Այստեղ կարելուբազում գործոն կա, որ Ռուսաստան-Ադրբեջան հարաբերություններում որոշակի բարդություններ են ստեղծվել՝ կապված գազային շահերի հետ», - ասել է Դավիթ Շահնագարյանը:

Բանախոսն իր խոսքում անդրադարձել է նաեւ խորհրդարանական դիվանագիտությանը՝ նշելով, որ այն մեծ պոտենցիալ ունի, եւ հույս ունի, որ խորհրդարանական պատվիրակությունները տարբեր հարթակներում կգործեն համաձայնեցված:

Նիստի վերջում ներկաները հանդես են եկել հարցերով եւ ելույթներով, որոնք մեծամասամբ վերաբերում էին Ղարաբաղյան հիմնախնդրին, սահմանային լարվածությանը, ներքին եւ արտաքին այլ մարտահրավերներին:

Հատուկ թողարկում. 4 գոհ սահմանին՝ մեկ օրում

17.06.2017

Ղարաբաղ-ադրբեջանական շփման գծում հունիսի 16-ին եւ լույս 17-ի գիշերը հայկական զինված ուժերը չորս գոհ են ունեցել: Երեկ ուշ երեկոյան Արցախի պաշտպանության բանակը հայտնեց, որ երեկոյան՝ ժամը 18-ի սահմաններում, հակառակորդի կրակոցից 3 ժամկետային զինծառայող է գոհվել: Մեր տեղեկություններով՝ 2 զինծառայող էլ վիրավորվել է: Նրանց տեղափոխել են Երեւան՝ կենտրոնական զինվորական հոսպիտալ:

Սահմանային միջադեպի մասին պաշտպանության բանակը գրեթե մանրամասներ չի հայտնել: Տեղեկացրել է միայն, որ հակառակորդը հաստոցավոր հակատանկային նռնականետից կրակ է արձակել Պաշտպանության բանակի կենտրոնական ենթակայության գորամասերից մեկի պահպանության տեղամասի ուղղությամբ: Չի հաղորդվում, սակայն, թե շփման գծի կոնկրետ որ ուղղությամբ է հասցվել հարվածը:

Բոլոր գոհվածները 1997 թվականի ծնվածներ են, հաշված օրեր անց գորացրվելու էին: Չոհերից Արայիկ Մատինյանը Լոռու մարզի Ծնող գյուղից էր, տան միակ արու գավակը. ավագ քույր ունի: Մյուս գոհը՝ Վարդան Սարգսյանը, Արագածոտնի մարզի Լուսազյուղ համայնքից էր, նույնպես ծնողների միակ որդին: Վարդանը երաժիշտ էր, ընդունվել էր Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի փողային նվագարանների բաժին: Նրանց հետ գոհված երրորդ զինծառայողը՝ Վիգեն Պետրոսյանը, Գեղարքունիքի մարզի Մեւան քաղաքից էր: Վիգենը Պետրոսյանների երեք որդիներից միջնեկն էր:

Չնայած կատարվածին՝ Արցախի պաշտպանության բանակը շփման գծում լարվածության աճի մասին չի հայտարարել: Այսօր առավոտյան հրապարակել է շփման գծի իրադրության ամենաբարձր ամփոփումը, որում ներկայացված հրադարարի ռեժիմի խախտումների թիվը նույնիսկ սովորականից ավելի քիչ է:

Ավելին, այսօր առավոտյան Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը Twitter-ի իր էջում գրել է, որ գիշերը շփման գծում համեմատաբար հանգիստ է անցել, կրակոցներ շատ չեն հնչել: Սակայն դրանից կարճ ժամանակ անց հայտնի դարձավ եւս մեկ գոհի մասին: Այս անգամ նշվել է հստակ ուղղությունը՝ հյուսիսային: Առավոտյան ժամը 10-ի սահմաններում հակառակորդի կրակոցից գոհվել է 20-ամյա Նարեկ Գասպարյանը: Նա ապրիլյան պատերազմի մասնակից էր: Նարեկը Երեւանից էր, մեկ ամիս գորացրվելու էր: Ծնողները սկսել էին վերանորոգել տունը՝ բանակից վերադարձող որդուն հավուր պատշանի դիմավորելու համար:

Միայն չորրորդ գոհի մասին հայտնելուց հետո Պաշտպանության բանակը հայտարարեց, որ հակառակորդի գործողությունների պատասխանը լինելու է թիրախային եւ անհամարժեք:

Նշենք, որ գոհված բոլոր զինծառայողները սոցիալապես անապահով ընտանիքներից են: Չոհված զինծառայողների հոգեհանգիստը տեղի կունենա վաղը, նրանց հողին կհանձնեն իրենց բնակավայրերում:

Արցախի նախագահ Բակո Սահակյանը գոհված զինվորներին հետմահու պարգևատրել է «Մարտական ծառայություն» մեդալով:

ԵԱ. Կարեն Տոնականյանը հաղթեց թուրք Իբրահիմ Գոզչեկին

Ուկրաինայի Խարկով քաղաքում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանը ներկայացնող մարզիկները շարունակում են հաղթանակների շարքը: 60 կգ քաշային Կարեն Տոնականյանը հաղթել է թուրք Իբրահիմ Գոզչեկին եւ դուրս եկել 1/8 եզրափակիչ, հաղորդում է ՀԲՖ մամուլի ծառայությունը:

Պայքարի մեջ մտած Հայաստանի 4 ներկայացուցիչները միայն հաղթանակ են տարել: Հունիսի 18-ի երեկոյան ռինգ դուրս կգա նաեւ 75 կգ քաշային Արման Դարչինյանը: Նրա մրցակիցը կլինի Էստոնիան ներկայացնող Արթուր Չարվան:

Նախարար. Երեւանից Աշտարակ ու Արտաշատ նոր մայրուղին պատրաստ է՝ մինչեւ աշուն կկառուցեն նաեւ ուղանցքները



Երեւանից Արտաշատ ու Աշտարակ բետոնե մայրուղին գրեթե պատրաստ է: Այս մասին հայտնել է Տրանսպորտի, կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը: Մտում է միայն կառուցել ուղանցքները ու շրջուղիները գյուղատնտեսական տեխնիկայի համար: Այդ աշխատանքը կապալառուն պետք է ավարտի մինչեւ տարեվերջ, բայց ամենայն հավանականությամբ կավարտի մինչեւ աշուն, հավելել է նախարարը: Մայրուղին ասֆալտապատից բետոնե է դարձվում «Հյուսիս- Հարավ» նախագծի շրջանակում:

«Հյուսիս- Հարավ» 4 գոտինով մարյուղին կերճատի իրանական մինչև վրացական սահման ճանապարհի ժամանակն ու հեռավորությունը՝ ներկա 556 կմ-ից մինչև 495 կմ, լեռնային մի շարք հատվածների հարթեցման ու նոր, ավելի ուղիղ հատվածների կառուցման հաշվին (Արարատ քաղաքից Վայոց ձորի միջով մինչև Մխիթանի Նորավան գյուղ, իսկ այնտեղից էլ մինչև Քաջարան քաղաք): Ծինարարության ընդհանուր արժողությունը կկազմի մոտ 960 մլն դոլար, նախագծի հիմնական վարկատուն է Ասիական զարգացման բանկը (մոտ 500 մլն դոլար): Ի սկզբանե մարյուղին ծրագրում էին կառուցել ամբողջովին բետոնապատ: Այրիլի վերջին տրանսպորտի նախարար Գագի կ Բեգլարյանը հայտնել է, որ հատվածների մի մասում բետոնի փոխարեն ասֆալտ է արվելու:

Տապավել է Ադրբեջանի նախաձեռնությունը՝ ընդդեմ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի. Aysor.am

07.06.2017

Տապավել է Ադրբեջանի հեղթական հակահայկական ձեռնարկը, այս անգամ՝ ՄԱԿ-ում:

Aysor.am-ի տեղեկություններով, ամիսներ շարունակ Միավորված ազգերի կազմակերպության վերին օղակներում Ադրբեջանը փորձել է խանգարել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը:

Բաքվին ակնհայտորեն դուր չի եկել այն, որ Արման Թաթայանն ակտիվ է միջազգային հարթակներում Լեռնային Ղարաբաղին առնչվող հարցերի քննարկման ընթացքում, եւ ՄԱԿ-ից պահանջել է սահմանափակել նրա գործունեությունը միջազգային այս կառույցում ու զրկել ամենաբարձր՝ A կարգավիճակից:

Ադրբեջանի այս նախաձեռնությունը, սակայն, ՄԱԿ-ում արդյունք չի տվել: Պարզվել է՝ Միավորված ազգերի կազմակերպությունը գոհ է Հայաստանի Պաշտպանի աշխատանքից եւ կարելու է համարում համագործակցությունը նրա հետ:

Khaleej Times. Հայաստանը հրաշալի զբոսաշրջային ուղղություն է

Արեւաշող խաղողի այգիներ, Արարատ սարի տպավորիչ գագաթներ ու հոյակապ ջրվեժներ՝ Հայաստանում բոլոր տեսարանները գեղեցիկ լուսանկարների գրավական են: Այս մասին ասվում է Հայաստանին նվիրված հոդվածում, որը հրատարակվել է ԱՄԷ-ում տպագրվող Khaleej Times թերթում:



Բազմաշերտ պատմությունն ու վառ մշակույթը դեպի Հայաստան ուղեւորությունը դարձնում են շրջադարձային

իրադարձություն յուրաքանչյուրի կյանքում: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից սկսած մինչև հռոմեական լեգիոնների, պարսիկների ու օսմանների հարձակումներ՝ քաջարի հայերը այս ամենի ականատեսն են դարձել: «11-րդ դարում թաթար սելջուկների ներխուժման պատճառով իրենց հողերը կորցրած հայերը նոր թագավորություն են կառուցել Կիլիկիայում, որը բարգավաճել է մինչև 1375 թ., խաղալով զգալի դեր խաչակրաց արշավանքներում: 20-րդ դարում, խորհրդային իշխանության յոթ տասնամյակներից հետո՝ 1991-ին հանրապետությունը վերջապես անկախություն ձեռք բերեց», - գրում է հեղինակը:

Հոդվածում նշվում է, որ Հայաստանը հոյակապ երկիր է զբոսաշրջիկների համար: «Մայրաքաղաք Երևանը գրավում է, քանի որ այնտեղ միաձուլվել են մոդեռն ու միջնադարյանը, հինն ու ժամանակակիցը», - ասվում է հոդվածում:

Հեղինակը Հայաստանի տեսարժան վայրերի գեղեցկությունը նկարագրում է որպես «թանգարան բաց երկնքի տակ», մասնավորապես առանձնացնելով Խոր Վիրապ եկեղեցին, Գառնի տաճարը ու Գեղարդ համալիրը ու նշելով, որ Հայաստանը եղել է Մետաքսի ճանապարհի ճանապարհի մի մասը, ինչի շնորհիվ հարստացել է երկրի մշակույթը:

Մարդասիրական օգնության երկրորդ խմբաքանակն ուղարկվել է Սիրիա

19:35, 08.06.2017



ՀՀ նախագահի հանձնարարությամբ, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, հունիսի 8-ին Սիրիա է առաքվել հակամարտությունից տուժած բնակիչների համար նախատեսված մարդասիրական օգնության այս շաբաթ արդեն երկրորդ խմբաքանակը:

Ավելի վաղ՝ հունիսի 7-ին, Սիրիա էր ուղարկվել շուրջ 18 տոննա բեռ՝ հիմնականում հագուստ եւ սննդամթերք: Մարդասիրական օգնությունը տեղափոխող ինքնաթիռը հունիսի 7-ի երեկոյան վայրէջք է կատարել Սիրիայի Արաբական Հանրապետության Լաթաքիա քաղաքում տեղակայված ՌԴ ռազմաբազայում, որից անմիջապես հետո իրականացվել է բեռանաթափման եւ բաշխման գործընթացի կազմակերպումը:

Հալեպում ՀՀ հյուպատոսության եւ ՌԴ Հակամարտող կողմերի հաշտեցման կենտրոնի համատեղ ջանքերով, առաջիկա օրերին մարդասիրական օգնությունը հավասարապես կբաշխվի սիրիական հակամարտությունից տուժած Լաթաքիայի, Դամասկոսի, Հալեպի եւ սիրիական այլ քաղաքների առավել կարիքավոր ընտանիքներին:

Նշենք, որ սա Միրիայի բարեկամ ժողովրդին ցուցաբերվող մարդասիրական օգնության արդեն երրորդ փուլն է: Առաջին ինքնաթիռը Երևանից Լաթաքիա էր մեկնել այս տարվա փետրվարին:



Մահացել է Արմեն Թութունջյանը
8 ՀՈՒՆԻՍԻ, 2017



Այսօր՝ հունիսի 8-ին, հանկարծամահ է եղել անվանի ջազմեն Արմեն Թութունջյանը՝ Չիկոն: Մահվան պատճառը դեռևս հայտնի չէ:

Արմեն Թութունջյանը ծնվել է 1944 թվականի հունվարի 28-ին, Երևանում:

Թութունջյանը Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ էր, Երևանի պետական կոնսերվատորիայի դոցենտ, հարվածային գործիքներ նվագելու ակադեմիական ուսուցանման հիմնադիրը Հայաստանում:

1986-1992 թթ. նվագել է Կոնստանտին Օրբելյանի ղեկավարած Հայաստանի պետական էստրադային նվագախմբում: 1994 թ. ԱՄՆ-ի պետդեպարտամենտի «Open competition» մրցույթի ժամանակ ճանաչվել է հաղթող:

1992 թ. նա մի խումբ երիտասարդ երաժիշտների հետ ստեղծել է «Չիկոն եւ ընկերները» խումբը, որտեղ նվագել են Հանրապետության մի շարք հայտնի ջազային երաժիշտներ: Խումբը գործում է ցայսօր:

1996 թ-ից «Հայ FM» ռադիոկայանով վարել է «Միրված երգիչներ» եւ «Ջազ» հաղորդումները: 1998 թ-ից վարում է «Ջազի ժամ» հաղորդումը նախ՝ «Ա1+», «Նոր այլք»,

«Արարատ», 2011 թ-ից՝ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ:

2008 թ. Հայաստանի Ազգային երաժշտական մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է Հատուկ մրցանակի՝ «Ջազի ժամ» հաղորդաշարի համար: 2008 թ. ՀՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ պատվավոր կոչումը: 2009 թ-ից Վահագն Հայրապետյանի եռյակի եւ քառյակի թմբկահարն է: 2011 թ. լույս է տեսել նրա թմբկահարների առաջին հայերեն լեզվով «Ռիթմ եւ շարժում» ձեռնարկը:

ԱՄՆ-ից Հայաստան է ներմուծվել առանձնապես խոշոր չափերի թմբամիջոց



ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում քննվող քրեական գործով ձեռնարկված մեծածավալ քննչական գործողությունների արդյունքում բացահայտվել է կազմակերպված խմբի կողմից առանձնապես խոշոր չափերի թմբամիջոցների ապօրինի շրջանառության դեպք. թմբամիջոցը Հայաստան է ներմուծվել ԱՄՆ-ից:

Քրեական գործով իրականացված քննչական գործողությունների արդյունքում բացահայտվել են թմբամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող խմբի անդամների ինքնությունը, որոնցից մեկը բնակվում է ԱՄՆ-ում, 2-ը՝ Հայաստանում:

Այսպես՝ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ ԱՄՆ-ում բնակություն հաստատած, ազգությամբ հայ տղամարդը պայմանավորվածություն է ձեռք բերել ՀՀ-ում բնակվող իր մանկության ընկերոջ եւ վերջինիս ծանոթի հետ՝ առանձնապես խոշոր չափերի թմբամիջոց իրացնելու վերաբերյալ: Պայմանավորվածության համաձայն՝ ԱՄՆ-ում ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով «Մեթամֆետամին» տեսակի թմբամիջոց եւ այն ծանրոցի մեջ քողարկելով ուղարկել Հայաստանի Հանրապետություն: ՀՀ-ում ընկերն այն ստացել է եւ իրացնելու նպատակով փորձել թմբամիջոցով ծանրոցը փոխանցել խմբի մյուս անդամին, սակայն հայտնաբերվել է:

Ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝ ՀՀ-ում բնակվող 2 քաղաքացիների մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նրանց մասով քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան: Միաժամանակ քննիչը որոշում է կայացրել՝ ԱՄՆ-ում բնակվող տղամարդուն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ

հողվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի, 267.1 հողվածի 4-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով որպէս մեղադրյալ ներգրավելու մասին: Նրա նկատմամբ որպէս խափանման միջոց է կիրառվել կալանավորումը եւ հայտարարվել հետախուզում: Նրա վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթ եւ հանձնարարություններ տրվել ոստիկանության համապատասխան բաժնին միջոցներ ձեռնարկել՝ հետախուզվողին վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Մահացել է ճանաչված լեզվաբան Սոնա Մեֆերյանը

08.06.2017



78 տարեկանում վախճանվել է ճանաչված լեզվաբան, թարգմանչուհի, ՀՀ վաստակավոր մանկավարժ Սոնա Մեֆերյանը: Նա ծնվել է 1939 թվականին Հայկում: 1960-ին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ժամանակագրմանական լեզուների բաժինը, երկար տարիներ դասավանդել է պետհամալսարանում: Սոնա Մեֆերյանի նախաձեռնությամբ հիմնադրվել են ԵՊՀ թարգմանչաց դպրոցը (1970թ.), «Աստղիկ» տարեգիրքը (1988թ.), «Մահակ Պարթև» հրատարակչությունը (1990թ.): Մեֆերյանը Ծեքսայիրագիտության կենտրոնի ղեկավարն էր, Երիտասարդ թարգմանիչների ասոցիացիայի պատվավոր անդամ: Նրա գրչին են պատկանում «Իմաստախոս Ծեքսայիրը», «Ծեքսայիրը հայ իրականության մեջ (1850-1950)» աշխատությունները, համատեղ կազմված Հայերեն-անգլերեն, Անգլերեն-հայերեն բառարաններ: Մեֆերյանը նաև անգլիական, ամերիկյան գրականությունից թարգմանություններ է կատարել (Լուիս Բերոլ, Ռ.Բիփլինգ, Ս.Ֆիցջերալդ եւ այլն):

Սյունիքի օդանավակայանում վայրէջք է կատարել առաջին ինքնաթիռը

Առաջին ինքնաթիռը Սյունիքի օդանավակայանում ավարտել է փորձնական թռիչքը: Այս մասին Facebook սոցիալական ցանցի էջում գրել է Ռոբերտ Հայրապետյանը: Հիշեցնենք, որ Խորհրդային տարիներին Կապանում գործող օդանավակայանը Երևանից եւ Խորհրդային Հայաստանի այլ քաղաքներից փոքր ավիացիայի չվերթներ է ընդունել: Օդանավակայանի վերանորոգման անհրաժեշտության մասին 2013 թվականին՝ նախընտրական քարոզարշավի շրջանակում Սյունիքի մարզ այցի ժամանակ հայտարարել էր նախագահ Սերժ Սարգսյանը:

Իսպանիայի Վալենսիա քաղաքը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

09.06.2017



Հունիսի 9-ին Իսպանիայի Վալենսիա քաղաքի տեղական ինքնակառավարման խորհուրդն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող եւ դատապարտող որոշում: Այդ մասին հայտնում է Իսպանիայում ՀՀ դեսպանությունը: «Կոմյւրմիս», «Վալենսիա Էն Կոմուն» եւ Սոցիալիստական կուսակցությունները կողմ քվեարկեցին «Արարատ» հայկական միության՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեռի օգտին՝ դատապարտելով 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը եւ հորդորելով Վալենսիայի խորհրդարանին, Իսպանիայի կառավարությանը, ինչպես նաև Թուրքիային՝ հետևել իրենց օրինակին:

Մահացել է Սերգեյ Սարինյանը. Սերժ Սարգսյանը ցավակցական հեռագիր է հղել

09.06.2017



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ հունիսի 9-ին, ցավակցական հեռագիր է հղել Սարինյանների ընտանիքին՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, անվանի գրականագետ Սերգեյ Սարինյանի մահվան կապակցությամբ: Հանրապետության նախագահը խորին ցավակցություն է հայտնել ճանաչված մտավորականի ընտանիքին, հարազատներին, մերձավորներին եւ գործընկերներին: «Վաստակաշատ գիտնականն իր ողջ գործունեությունը նվիրեց հայ դասական եւ ժամանակակից գրականության, գրականագիտության մեթոդաբանության եւ տեսության ուսումնասիրությանը: Նա մեծ ավանդ ներդրեց նաև հայ գրականության գիտական հրատարակման եւ հանրահռչակման հայրենական գործում:

Նշանակալի է Սերգեյ Սարինյանի վաստակը մանկավարժության՝ բանասերների նոր սերնդի կրթման եւ դաստիարակման ասպարեզում: Նա արժանիորեն վաստակեց իր գործընկերների եւ ուսանողների հարգանքն ու համակրանքը»,-ասված է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ցավակցական հեռագրում:

Հայաստանը պահանջված ուղղություն է դառնում Օմանից ժամանող զբոսաշրջիկների համար

15.06.2017



Վրաստանն ու Հայաստանը պահանջված հանգստյան վայրեր են դառնում Օմանից ժամանող զբոսաշրջիկների համար, մանավանդ Ռամադանի ավարտից հետո՝ տոների ժամանակ:

Տեղական զբոսաշրջային գործակալների խոսքով, Վրաստանն ու Հայաստանը այս սեզոնի առաջատարներն են՝ վիզային սահմանափակումների չեղարկման շնորհիվ, հայտնում է The Times of Oman-ը:

Mezoon International Travel գործակալության գլխավոր գործադիր տնօրեն Ռիյազ Կատտերին նշում է, որ այն բանից հետո, երբ օմանցիներին հնարավորություն է տրվել վիզա ստանալ Հայաստան ժամանելուց հետո, զբոսաշրջային ընկերությունները բազմաթիվ պատվերներ են ստանում, քանի որ Հայաստանի ուղղությամբ չվերթներն իրականացվում են գրավիչ սակագներով:

Գործակալության ներկայացուցչի խոսքով, որոշակի տեղաշարժ կա նաեւ հաճախորդների նախապատվություններում: «Հին ֆավորիտները, օրինակ Շվեյցարիան, Փարիզը, Լոնդոնը, Բանգկոկը, Մինգապուրն ու Մալայզիան, նախկինի պես գրավիչ են մնում: Այդուհանդերձ, դրա հետ մեկտեղ շատ աճել են տուրփաթեթների պատվերները Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպայի երկրների ուղղությամբ՝ օրինակ Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Բոսնիայի, Խորվաթիայի, Սլովենիայի ու Ռումինիայի»,- նշում է նա:

Արցախի Սուրբ Ստեփանոս եկեղեցու պեղումները կսկսվեն հունիսի վերջին՝ մասնավոր միջոցներով (ֆոտո)

15.06.2017

Հունիսի վերջին կսկսվեն Արցախի Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղի Վաճառի Սուրբ Ստեփանոս եկեղեցու դամբարանի պեղումները: Այս մասին հունիսի 15-ին լրագրողներին հայտնեց Արցախում Տիգրանակերտ հնագիտական արշավախմբի ղեկավար Համլետ Պետրոսյանը: Նրա խոսքով այս պեղումները մեծ նշանակություն ունեն Արցախի հայկական եկեղեցու

առանձնահատկությունները հասկանալու համար, որը երկար ժամանակ կոչվել է Աղվանաց:



Նա նշեց, որ Արցախում գիտնականի աշխատանքը մի շարք դժվարություններով է ուղեկցվում, շատ դժվար է փաստերը վավերականացնել, որոնք առաջին հայացքից չպետք է այդպիսին լինեն, քանի որ մեր գիտնականները նախկինում այլ բան են պնդել: «Հարյուրավոր տեղերում կարող եք կարդալ, որ Արցախի ճարտարապետությունն ամեն ինչով նույնական է Հայաստանի կենտրոնական նահանգների ճարտարապետության հետ: Սակայն հայությունը մեծ հանրույթ է: Հայկական քրիստոնեական մշակույթը բազմազան է, եւ մենք հիմա այս բազմազանության հայտնաբերման ու պարզաբանման ճանապարհին ենք»,- ասաց նա:

Համլետ Պետրոսյանը հիշեցրեց, որ երկար ժամանակ հայկական արեւելյան նահանգները մտել են, այսպես կոչված, Աղվանաց եկեղեցու կազմի մեջ: «Օգտվելով այս եկեղեցու անվանումից՝ մեր հակառակորդները մշտապես ստում են, որ այս եկեղեցին հայկական չի եղել: Իրականում սա հայերի առանձին եկեղեցի է, որը կազմավորվել է քաղաքական որոշակի պայմաններում»,- նշեց գիտնականը: Նա հիշեցրեց, որ 2014 թվականին Տիգրանակերտի վաղքրիստոնեական հրապարակում պեղումների ընթացքում, երկրորդ եկեղեցու բեմի տակ դամբարան գտնվեց միակ արեւելյան մուտքով: Մինչդեռ բոլոր քրիստոնեական կառույցներն ուղղված են արեւմուտքից արեւելք, քանի որ արեւելքից է սպասվում Քրիստոսի գալուստը:



Այնուհետեւ պեղումներ անցկացվեցին Ամարասում, եւ Ամարասի դամբարանում նույնպես արեւելյան մուտք հայտնաբերվեց:

Արեւելյան մուտքով երրորդ եկեղեցին Վաճառի Սուրբ Ստեփանոս եկեղեցին է:

Հնագետի խոսքով այն գտնվում է Գանձասար վանքից ոչ հեռու, Իսաչենագետ գետի ձախ ափին: Ինչպես հայտնեց Համլետ Պետրոսյանը, պեղումները մասնավոր անձ է հովանավորում:

Հնագետը լրագրողներին հայտնեց, որ Աղվանաց եկեղեցին 5-րդ դարի վերջին-6-րդ դարի սկզբին հիմնել է Վաչագան Բարեպաշտ թագավորը:

«Պետք է հիշել, որ այդ ժամանակ Հայաստանում արդեն թագավորություն չկար, եւ Աղվանաց թագավորը, որի տիրապետության ներքո էին նաեւ հայկական բնակչությանը Արցախը, Ուտիքը, Սյունիքի մի մասը, իր թագավորության համար եկեղեցի է ստեղծում, որը երկրի անվամբ ստանում է Աղվանաց անունը: Աղվանաց եկեղեցու ստեղծումը զուտ քաղաքական նպատակներ էր հետապնդում, եւ նրա համար ստեղծվել էր նոր լեզուն, որի համաձայն այն ծագում էր Երուսաղեմյան եկեղեցուց, նրա հիմնադիրն է Եղիշե առաքյալը, որը Երուսաղեմից է Աղվանք եկել, շրջանցելով Հայաստանը: Մինչդեռ հայկական աղբյուրներից մենք գիտենք, որ այդ եկեղեցին հիմնել է Գրիգորիսը: Արեւելյան մուտքով միակ քրիստոնեական կառույցը Երուսաղեմում Տիրոջ գերեզմանն է: Ուստի այդ ժամանակ որոշում է ընդունվում որոշ դամբարաններ երուսաղեմյան եկեղեցու մասն արեւելյան մուտքով կառուցել: Սա Արցախում միանգամայն նոր հայտնագործություն է: Մենք այս մասին գիտենք ընդամենը 4 տարի, եւ մեր հիմնական խնդիրն է այս բոլոր հարցերը վերջնականապես պարզել», - ասաց հնագետը:

Նա հիշեցրեց, որ Տիգրանակերտում հայերեն գրությամբ սալ է հայտնաբերվել. «Ես՝ Վաչագանս, Տիրոջ ծառան»: Գիտնականը պարզաբանեց, որ Վաչագան թագավորի բարեփոխումը ամբողջությամբ հայկականության շրջանակում էր, իսկ շեշտը դրվել է այն բանի վրա, որ ստեղծվի հայկական եկեղեցուց առանձնացված՝ իր թագավորական իշխանությանը վայել եկեղեցի:

«Մինչեւ հիմա մեր մասնագետները դժվարանում էին բացատրել, թե ինչու է ստեղծվել Աղվանաց եկեղեցի: Ինչու հայկական հոծ բնակչությամբ վայրերում հայկական եկեղեցին պետք է երկրորդ ճյուղ ունենար: Ըստ էության, մենք այսօր գտել ենք այս հարցի պատասխանը՝ սրա հիմնավորումը զուտ քաղաքական է: Այդ ժամանակ հայ Արշակունիներն արդեն չկային, եւ Հայաստանը Պարսկաստանի նահանգն էր դարձել: Աղվանաց թագավորը, որը քրիստոնյա էր եւ հայերն այրուբենն էր օգտագործում (նա ծագում էր Արշակունիներից, այսինքն՝ սերում էր պարթևներից), փորձել է իր եկեղեցուն մի փոքր այլ ձեւ տալ: Եվ սա այս եկեղեցուն երկար ժամանակ զոյատեւելու հնարավորություն է տվել, նրա հետեւորդներն էին Քուռ գետի աջափնյակի հայ բնակչությունը: Այս եկեղեցում հայկական գրականություն եւ մշակույթ է ստեղծվել, բայց այն պահպանել է Աղվանաց անունը», - նշեց գիտնականը:

Հայկական մշակութային ժառանգության պահպանումն անհնար է միայն պետական միջոցներով. Համլետ Պետրոսյան

Հայկական մշակութային ժառանգության պահպանումն անհնար է միայն պետական միջոցներով, կարծում է հնագետ Համլետ Պետրոսյանը: Հունիսի 15-ին՝ լրագրողների հետ զրույցում նա նշեց, որ այս գործին անպայման պետք է ներգրավվել մասնավոր հատվածին:

«Եթե նույնիսկ մեր պետությունը հարուստ լիներ, եւ մեր պաշտոնյաները գերծ մնային կոռուպցիայի ցանկացած ձեւից, մեր միջոցները, միեւնույն է, չէին բավականացնի այս վիթխարի ժառանգության պահպանման համար», - ասաց նա՝ հավելելով, որ այսօր մեր գլխավոր խնդիրը այդ ժառանգությունը հանրության սեփականությունը, համայնքների սեփականությունը դարձնելն է:



Հնագետի կարծիքով սա հնարավոր է իրականացնել մեծ թվով սոցիալական, մշակութային եւ բիզնես նախագծերի միջոցով: Իսկ պետության միակ դերը պետք է լինի համապատասխան օրենսդրության ապահովումը: Համլետ Պետրոսյանը նշեց, որ նման օրինակ արդեն կա, երբ հուշարձանները հետազոտում, պահպանում եւ շահագործում են մասնավոր ընկերությունները: Այսպես են վարվում Մեծ Բրիտանիայում եւ Իսրայելում:

Համլետ Պետրոսյանը մասնավոր եւ պետական հատվածների հաջող համագործակցություն է համարում նաեւ Տիգրանակերտը: Նա կարծում է, որ այս հուշարձանը կարող է նման մոտեցման առաջամարտիկը լինել:

Հայաստանում բացվեց արեւային վահանակներ արտադրող առաջին գործարանը. Ներկա էր վարչապետը



«Հ վարչապետ Կարեն Կարապետյանն այսօր՝ հունիսի 29-ին, ներկա է գտնվել «Պրոֆպանել» ընկերության՝ Հայաստանում առաջին արեւային վահանակներ արտադրող գործարանի պաշտոնական բացման արարողությանը:

Կառավարությունից հայտնում են, որ ընկերությունը Հայաստանում արեւային վահանակների արտադրության ոլորտում գործունեություն է ծավալում 2016 թվականից SolarOn ապրանքանիշով:

Վարչապետ Կարապետյանը շրջայց է կատարել գործարանում, ծանոթացել արտադրական գործընթացին, ընկերության ծրագրերին եւ զարգացման հետանկարներին: Կառավարության ղեկավարին ներկայացվել է, որ SolarOn

արեւային վահանակներ արտադրող եւ տեղադրող գործարանի արտադրական հզորությունը կազմում է տարեկան 10 ՄՎտ, աշխատակիցների քանակը լրիվ արտադրական ծանրաբեռնվածության դեպքում՝ 50 մարդ: Սկզբնական ներդրումների ծավալը կազմում է մոտ 2 մլն ԱՄՆ դոլար: Ընկերությունը նախատեսում է նախ արեւային վահանակներ մատակարարել ներքին շուկային, ապա կազմակերպել արտահանում դեպի տարածաշրջանային եւ այլ երկրներ: 1,5 կՎտ հզորությամբ արեւային մինի-կայանը, որը կարող է արտադրել ամսական մոտ 200 կՎտժ էլեկտրաէներգիա, կարժենա 1,5-1,7 հազ. ԱՄՆ դոլար: 2017 թ. գարնանից ընկերությունն աշխատում է թեստային ռեժիմով եւ արդեն իրականացրել է արտադրական եւ բնակելի տարածքների համար արեւային կայանների տեղադրման մի շարք նախագծեր:

Նշենք, որ 2017 թ. փետրվարի 23-ի նիստում կառավարությունը որոշել էր ներդրումային ծրագրի շրջանակում «Պրոֆպաներ» ՍՊԸ-ին ազատել մաքսատուրքից՝ տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի եւ նյութերի ներմուծման համար:

Իսրայելցի գործիչ. Ես բոլորին կոչ եմ անում այցելել Լեռնային Ղարաբաղ

30.06.2017



Ես բոլորին կոչ եմ անում այցելել Լեռնային Ղարաբաղ: Այս մասին հունիսի 30-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է իսրայելցի քաղաքագետ, հասարակական գործիչ Ավիգդոր Էսկինը:

«Ի՞նչ է նշանակում մարդուն հանցագործ հայտարարել այն բանի համար, որ նա Ղարաբաղում իր ընկերներին է այցելել: Ես ոչ միայն այցելել եմ, այլև Մոսկվայում ու Իսրայելում իմ բոլոր ընկերներին կոչ եմ անում Ղարաբաղ այցելել: Այս մարդիկ չպետք է մեկուսացման մեջ լինեն: Ես տեսնում եմ, որ այնտեղ՝ Ղարաբաղում, շատ հետաքրքիր մարդկային ներուժ կա: Ես ասում եմ մարդկանց՝ գնացեք այնտեղ հանգստանալու, գնացեք այնտեղ որպես զբոսաշրջիկներ», - նշել է Ավիգդոր Էսկինը:

Իսրայելցի քաղաքագետ. Հայկական կողմն իմաստություն է դրսևորել 2016-ի ապրիլյան Էսկալացիան դադարեցնելով

Հայկական կողմը իմաստություն է դրսևորել դարաբաղյան հակամարտության գոտում 2016-ի ապրիլյան Էսկալացիան դադարեցնելով: Այս մասին հունիսի 30-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է իսրայելցի քաղաքագետ, հասարակական գործիչ Ավիգդոր Էսկինը:

Անդրադառնալով անցած տարվա ապրիլյան իրադարձություններին, նա նշել է: «Ես ամբողջական տեղեկատվություն չունեմ այն մասին, թե ինչ է այնտեղ տեղի ունեցել: Բայց ես կարծում եմ, որ մենք բոլորս պետք է շնորհակալ լինենք հայերին այն բանի համար, որ նրանք շատ կարեւոր դեր են կատարել դա կանգնեցնելու հարցում: Դա ոչ միայն իմ, այլև Իսրայելում իմ բազմաթիվ գործընկերների տեսակետն է: Իրոք, հայկական կողմը դրսևորեց նման իմաստություն դրսևորելու ունակություն»:

ՎՉԵԲ-ը 2 մլն եվրո կհատկացնի Հայաստանում աղբավայր կառուցելու համար



ԵՏՔ հիմնադրամը կհամաֆինանսավորի Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի կոշտ թափոնների համար մեկ նոր աղբավայր կառուցումը՝ տրամադրելով 2 մլն եվրո դրամաշնորհ:

ՎՉԵԲ-ը, որը կառավարում է Արևելյան Եվրոպայի Էներգախնայողություն և շրջակա միջավայրի գործընկերություն (ԵՏՔ) հիմնադրամը, և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը այսօր ստորագրել են համապատասխան համաձայնագիրը:

Դրամաշնորհի միջոցները կաջակցեն կոշտ թափոնների կառավարման ժամանակակից գործընթացներ կիրառող նոր աղբավայրի կառուցմանը, որը ներառում է մունիցիպալ կոշտ թափոնների հավաքումը և հեռացումը: Այն տեղական բնակիչներին կբերի խոշոր բնապահպանական և սոցիալական օգուտներ:

ԵՏՔ հիմնադրամի կողմից տրամադրվող 2 միլիոն եվրո դրամաշնորհը կհամարի ՎՉԵԲ-ի կողմից տրամադրվող 2 միլիոն եվրո գումարի չափով վարկը և կհամաֆինանսավորի փոխանցման կայանները, թափոնները հավաքող ու տեղափոխող բեռնատարները, թափոնների բեռնարկղերը և այլ մասնագիտացված սարքավորումները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 11 մլն եվրո:

Հակառակորդը դիվերսիա է արել, առնվազն չորս գոհ տվել ու ետ շարտվել (Ֆոտո)



Ս.թ. հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը ադրբեջանական հատուկ ջոկատայինների կողմից հակամարտ գործերի շփման գծում ձեռնարկվել է դիվերսիոն ներթափանցման փորձ: ՊԲ մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումները, շնորհիվ մարտավարական բարձր պատրաստվածության, դիրքային համակարգերի

կահավորվածության եւ տեխնիկական պատշաճ հագեցվածության, ժամանակին հավաստանշել են դիվերսիոն խմբի առաջխաղացումը եւ հակառակորդին պատճառելով առնվազն 4 զոհ՝ հետ շարտել ելման դիրքեր: Ադրբեջանական կողմը հայկական մերձդիրքային հատվածում թողել է հատուկ գրոհայինների անձնական պարագաներ:



Ներթափանցման փորձը կանխելու ընթացքում ՊԲ-ն կորուստներ չի ունեցել: Առաջնագծում օպերատիվ իրադրությունը շարունակում է մնալ արցախյան զինուժի լիակատար վերահսկողության ներքո:

Ադրբեջանում գերեվարված ՀՀ քաղաքացին մտավոր հետամնացություն ունի, թափառական կյանք է վարել. ոստիկանություն

22.06.2017



«ՀՀ ոստիկանությունն անդրադարձել է ադրբեջանական լրատվամիջոցներով տարածված տեղեկությանը՝ Չավեն Կարապետյան անուն-ազգանունով անձի գերեվարվելու մասին:

«ՀՀ ոստիկանության հաղորդագրության մեջ ասվում է. «ՀՀ ոստիկանության կողմից կատարված ստուգումներով եւ ուսումնասիրությամբ պարզվել է, որ տարածված անձնական տվյալները համընկնում են Վանաձորի Մայմեխի 1 հասցեում գտնվող ծերանոցում հաշվառված, 16.11.1974 թ. ծնված Չավեն Կարապետյանի տվյալների հետ: Չ.Կարապետյանը ծնվել է Նոր Խարբերդ ավանում: Մայրը՝ Մ. Կարապետյանը, եղել է Խարբերդի հաշմանդամների տան շահառու: 1978 թ. Չավեն Կարապետյանն ընդունվել է Գավառի մանկատուն, որտեղից դուրս է գրվել 1982 թ. եւ տեղափոխվել մայրաքաղաքի Սովետաշենի օժանդակ դպրոց: 1994 թ. աշնանը Չ.Կարապետյանը տեղափոխվել է Վանաձոր քաղաք եւ մոտ 4 տարի բնակվել Ծառ Ազնավուրի հիմնադրամի կողմից տրամադրված տնակում՝ օժանդակ դպրոցի նախկին սաներից մեկի հետ, հետո միայնակ է բնակվել Վանաձորի «Արմենիա» առողջարանի տարածքում տեղադրված եւ իրեն հատկացված տնակում: Հաշվառման վայր չունենալու

պատճառով 2004 թ. հաշվառվել է Վանաձորի Մայմեխի 1 հասցեում գտնվող ծերանոցում եւ նույն թվականին Վանաձորի անձնագրային բաժանմունքի կողմից ստացել անձնագիր:

Անձնագրի վավերականացման տասնամյա ժամկետը լրանալուց հետո չի դիմել նոր անձնագիր ստանալու համար: Չ.Կարապետյանը ՀՀ զինված ուժերում չի ծառայել, քանի որ առողջական խնդիրներ է ունեցել (մտավոր հետամնացություն) եւ ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ 24.12.1993 ազատվել է ծառայությունից: Չ.Կարապետյանը հետագայում ապամոնտաժել եւ վաճառել է իր տնակը եւ դրանից հետո վարել թափառական կյանք, մշտական բնակության վայր չի ունեցել: Ըստ ստացված տեղեկությունների՝ ՀՀ տարբեր տարածքներում վարձատրության դիմաց անասնապահությամբ է զբաղվել: Խուսափել է շփումներից, եղել է ինքնամփոփ, առերևույթ ակնհայտ են եղել մտավոր թերություններ»:

Հայաստանից հեռացողները վատ հայրենասերներ են. նախկին պատգամավոր

22.06.2017



Հայաստանից հեռանում են այն մարդիկ, որոնց մոտ հայրենասիրության զգացումը թույլ է արտահայտված, եւ որոնք ցանկանում են իրենց կյանքի պայմանները լավացնել: Այս մասին հունիսի 22-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հանրապետական կուսակցությունից նախկին պատգամավոր Լեոնիկ Ալեքսանյանը:

«Արտագաղթ կա: Մակայն դրա պատճառներն այնքան էլ տնտեսական չեն: Ես սրա մեջ համոզված եմ: Ես խորապես ուսումնասիրել եմ այն մարդկանց հարցը, ովքեր Հայաստանը լքում են: Չափից ավելի աղքատները, որոնք հողին կպած են, երկիրը չեն լքում: Լքում է հիմնականում ակտիվ հատվածը: Նրանք, ովքեր ցանկանում են ավելի լավ ապրել»,- ասաց նախկին պատգամավորը՝ հավելելով, որ ոչ ոք չի կարող բոլորին ստիպել լավ հայրենասերներ լինել: Նրա խոսքով՝ հասարակության շարքերում կարող են լինել ավելի կամ պակաս հայրենասիրական տրամադրվածությամբ քաղաքացիներ: Մակայն Ալեքսանյանը հավելեց, որ այս մարդկանց չի մեղադրում եւ հասկանում է հեռանալու պատճառը. կարեւորագույն պատճառներից մեկը, որը մարդկանց արտագաղթելու է մղում, հասարակության մեջ իշխող անարդարությունն է:

Հանդիպման մյուս բանախոս Կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրյանն իր հերթին հայտարարեց, որ ստեղծված իրավիճակի անմիջական մեղավորը գործող իշխանությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետական կուսակցության: Ընդդիմադրի խոսքով՝ վերջերս կայացած խորհրդարանական ընտրությունների ընթացքում ավելի քան միլիոն մարդ հարկադիր կարգով

կաշառք է ստացել: «Գիտե՞ք, թե Հայաստանի խորհրդարանական ընտրությունների շրջանում ինչ խնդրի առջև է կանգնել բանկային համակարգը: 10 հազար դրամ անվանակարգով թղթադրամ պարզապես չկար»,- հավելեց Ասատրյանը՝ ակնարկելով ընտրակաշառքի չափը:

«168 ժամ». Բանակցությունների ներկայիս ձեւաչափը տանում է պատերազմի. Իսկ ի՞նչ կլինի, եթե Ադրբեջանը պատերազմի գնա

«168 ժամ» թերթը գրում է. «Բանակցություններում ներգրավվելը, իհարկե, լավ է, բայց խնդիրն այն է, որ կողմերը սկզբունքորեն շատ տարբեր կերպով են հասկանում բուն բանակցությունները եւ դրանց վերջնական արդյունքը: Եվ այն, ինչ մի կողմի համար փոխզիջում է, մյուս կողմի համար բոլորովին էլ փոխզիջում չէ. յուրաքանչյուր կողմը խնդրի լուծումը տեսնում է բացառապես իր սցենարով, եւ այս պայմաններում բանակցություններն անիմաստ են: Բայց յուրաքանչյուր կողմն էլ համաձայն է մասնակցել բանակցություններին՝ պայմանով, որ դրանք անպայման կավարտվեն այնպես, ինչպես ինքն է ուզում: Իսկ իրական կյանքում այդպես չի լինում, եւ Ղարաբաղյան հակամարտության դեպքում նույնպես այդպես չի կարող լինել:



Այդ պատճառով ներկայումս, ցավոք, բանակցությունները ոչ մի արդյունք չեն կարող տալ: Եվ ՄԻՄ համանախագահների ջանքերն ուղղված են հնարավոր պատերազմը կանխելուն», - մեր թղթակցին ասել է ռուսաստանցի քաղաքական գործիչ, Կովկասի հարցերով փորձագետ, «Alte et Certe» վերլուծական կենտրոնի ղեկավար Անդրեյ Էպիֆանցեւը՝ մեկնաբանելով ԵԱՀԿ ՄԻՄ համանախագահների հայտարարությունը, որ երկու մայրաքաղաքներում կոչ են արել կողմերին «բարեխղճորեն եւ քաղաքական կամք ցուցաբերելով՝ կրկին ներգրավվել բանակցային գործընթացում»:

Ըստ նրա՝ ո՛չ Բաքվի, ո՛չ էլ Երեւանի դիրքորոշումը չի նպաստում բանակցություններին, դա անիմաստ է, յուրաքանչյուր կողմը խոսում է այն մասին, թե ինչպես մյուս կողմը կկատարի իր պայմանները. «Իսկ իրական դիվանագիտությունում այդպես չի լինում: Ես կարծում եմ, որ առավելագույն շահավետ սցենար թե՛ Բաքվի, թե՛ Երեւանի կողմից անհնար է: Ներկայիս իրավիճակի զարգացումների մի քանի սցենար կարելի է գծել: Առաջինը՝ միջազգային հանրությունը սկսի ճնշում գործադրել երկու կողմերի վրա, ընդգծում եմ երկու կողմերի՝ եւ՛ Բաքվի, եւ՛ Երեւանի վրա՝ նպատակ ունենալով հասնելու ինչ-որ իրական փոխզիջման:

Բայց ցանկացած դեպքում փոխզիջումը ցավոտ կլինի յուրաքանչյուր կողմի համար էլ: Այսինքն՝ կամ՝ միջազգային հանրությունը պետք է ինչ-որ լուծում առաջարկի եւ ճնշում գործադրի, կամ՝ լայնամասշտաբ պատերազմը կվերսկսվի,

բայց այն չի ավարտվի Ադրբեջանի հաղթանակով: Կարծում եմ՝ Ադրբեջանին թույլ չեն տա երկար պատերազմել, կարող է ապրիլյան քառօրյայի նման մի քան լինել, Ադրբեջանն առաջ գնա մի 1000 քառ. կմ կամ գիջի դիրքերը մի 1000 քառ. կմ: Ես սա պայմանական եմ ասում: Այլ իրավիճակ ես չեմ կարող կանխատեսել: Այնպես, ինչպես Երեւանը չի հրաժարվի Լեռնային Ղարաբաղից, այդպես էլ Բաքուն չի հրաժարվի Լեռնային Ղարաբաղից: Եվ բանակցությունների ներկայիս ձեւաչափը փակուղային է, տանում է պատերազմի»:

Արցախի Հանրապետությունը Եվրոպայի մաս է. Աշոտյանը՝ Բեյգիայի Սենատի անդամին

21.06.2017



Շփման գծում ադրբեջանական զինված ուժերի կողմից պարբերաբար իրականացվող զինադադարի կոպտագույն խախտումներն ամեն կերպ խաթարում են բանակցային գործընթացը: Այս մասին, այսօր՝ հունիսի 21-ին, Բեյգիայի Սենատի անդամ Յորիս Պոշետի հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանը:

ԱԺ-ից հայտնում են, որ ողջունելով հյուրին Ազգային ժողովում՝ Արմեն Աշոտյանը հույս է հայտնել, որ նոր ձեւավորված Ազգային ժողովի եւ Բեյգիայի խորհրդարանի միջեւ առկա ավանդական բարեկամական կապերը կշարունակեն ընթացում համագործակցության ոգով երկու երկրների խորհրդարաններում առկա գործընկեր հանձնաժողովների ակտիվ շփումների եւ միջխորհրդարանական բարեկամության խմբերի միջեւ գործակցության համատեքստում:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են ՀՀ-ԵՄ հարաբերություններին, Բրյուսելի գազաթափողվում նախատեսված ՀՀ-ԵՄ նոր Համապարփակ համաձայնագրի ստորագրման նշանակությանն ու դերին: Այս համատեքստում Արմեն Աշոտյանը նշել է, որ Հայաստանը եղել է մնում է հավատարիմ եվրոպական գործընկերության հիմքում ընկած իր հանձնառություններին եւ շարունակելու է ակտիվ մասնակցել եվրոպական ժողովրդավարության խթանմանն ուղղված նախաձեռնություններում:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին՝ Արմեն Աշոտյանը նշել է, որ շփման գծում ադրբեջանական զինված ուժերի կողմից պարբերաբար իրականացվող զինադադարի կոպտագույն խախտումներն ամեն կերպ խաթարում են բանակցային գործընթացը եւ տարածաշրջանում վստահության մթնոլորտը, ինչը հղի է անկանխատեսելի հետեւանքներով: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համատեքստում Արմեն Աշոտյանը նշել է, որ Արցախը Եվրոպայի մաս է, եվրոպական ժողովրդավարական արժեքները յուրացրած պետություն,

որի ժողովուրդը վաստակել է սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունք:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև հետագա համագործակցությանը վերաբերող հարցեր:

Միջուռքի նախարարություն. Հայաստանում ապրում է մոտ 22 հազար սիրիահայ

13:27, 19.06.2017




Ներկայումս Հայաստանում ապրում է մոտ 22 հազար ներգաղթած սիրիահայ: Այս մասին հունիսի 19-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Միջուռքի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության պետ Լևոն Անտոնյանը:

Նրա խոսքով՝ նրանց մեծ մասը Հայաստանի քաղաքացիություն է ստացել և օգտվում է այն բոլոր իրավունքներից, որոնցից օգտվում են երկրի քաղաքացիները: «Մենք փորձել ենք իրականացնել մշակութային, տնտեսական միջոցառումներ, որպեսզի աջակցենք թիզներին: Միջուռքից շատերը կարողացել են Հայաստանում թիզներ հիմնել և հաջողություններ գրանցել», - նշեց Անտոնյանը՝ շարունակելով, որ Հայաստանի հասարակությունը ևս զգացել է երկրի կյանքի վրա սիրիահայերի դրական ազդեցությունը: «Սակայն մեզ համար կարևոր է նաև Միջուռքում հայ համայնքի գոյությունը», - հավելեց Լևոն Անտոնյանը:

Մահացել է կինոռեժիսոր Ռուբեն Գեորգյանը

23.06.2017



72 տարեկանում մահացել է կինոռեժիսոր, ՀՀ ժողովրդական արտիստ Ռուբեն Գեորգյանը:

ՀՀ մշակույթի նախարարությունից հայտնում են, որ Ռուբեն Գեորգյանի մահվան կապակցությամբ կատեղծվի թաղման կառավարական հանձնաժողով:

Ռուբեն Գեորգյանը ծնվել է 1945թ. նոյեմբերի 30-ին, Երևանում: 1968թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը՝ Վարդան Աճեմյանի արվեստանոցը: 1971թ. աշխատել է Երևանի վավերագրական ֆիլմերի ստուդիայում՝ որպես ռեժիսոր: 1982-89թթ. եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի վավերագրական ֆիլմերի

ստեղծագործական միավորման գեղարվեստական ղեկավարը: 1989թ-ից եղել է փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիայի տնօրենն ու գեղարվեստական ղեկավարը: 1995-1998թթ. դասավանդել է Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում: 1998թ. դասավանդել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում (2003թ-ից՝ պրոֆեսոր): Նկարահանել է շուրջ 70 ֆիլմ՝ «Ներսիսյանցիները» (1968թ.), «Մի լուսանկարի հետքերով» (1970թ.), «Ներշնչանք» (1972թ.), «Ամենավավ մարդը» («Վերադարձի ուղին» նովել, 1979թ.), «Աշխարհումս» (1979-89թթ.), «Բարի հետք» (1980թ.), «Հայկական աչքեր» (1980թ.), «Գիշերվա մեջ ամկայծող կրակը» (1983թ.), «Քանի դեռ ապրում ենք» (1986թ.), «Կղզիներ» (1987թ.), «Սպիտակ ոսկոր» (1988թ.), «Ռեքվիեմ» (1989թ.), «Քույրիկը Լուս Անջելեսից» (1994թ.), «Գողթը» (1995թ.), «Փարաջանով՝ վերջին կուլած» (1995թ.), «Մեր Կոմանդոր» (2000թ.), «Քարեր ժողովելու ժամանակը» (2002թ.), «Հրաշագործի աշունը» (2008թ.) և այլն:

Մասնակցել է բազմաթիվ հայկական և միջազգային կինոփառատոների և արժանացել 21 դիպլոմի և մրցանակների, որոնցից 6-ը՝ գլխավոր: Հեղինակել է 3 գիրք՝ «Անձրեների ժամանակը», «Արդարացման ժամանակը», «Ժամանակ չկա»: Նկարահանվել է «Վրիժառու» (2008թ.) ֆիլմում: 1981թ. արժանացել է Օրերհաուզենի կինոփառատոնի գլխավոր մրցանակին՝ «Բարի հետք» ֆիլմի համար: 2002թ-ից Հեռուստատեսության և ռադիոյի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս էր, 2004թ-ից՝ Կինոյի և հեռուստատեսության ազգային ակադեմիայի նախագահը, 2005թ-ից՝ Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահը: 1982թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, 2006թ.՝ Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման:

Ագրամունտն Ադրբեջանի շահերի մասնավոր սպասարկու է. Միքայել Մելքունյանի ելույթը ԵԽԽՎ-ում



Պեղրո Ագրամունտի նման քաղաքական գործիչները քաջալերում են Ադրբեջանի կառավարությանն իրականացնել հակաժողովրդավարական քաղաքականություն: Այս մասին այսօր՝ հունիսի 26-ին, Եվրոպայի խորհրդարանական վեհաժողովի լիազումար նիստում հայտարարել է Աժ փոխնախագահ Միքայել Մելքունյանը:

«Պեղրո Ագրամունտի նման քաղաքական գործիչները քաջալերում են Ադրբեջանի կառավարությանն

իրականացնել հակաժողովրդավարական քաղաքականություն, որի հետևանքով Ադրբեջանը շարունակում է ձախողել Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման հետ կապված բոլոր համաձայնությունները: Ինչպես կարող է պատահել, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նման կառույցում մենք ունենանք այսպիսի երևույթ, ինչպիսին Պեդրո Ազրամունտն է: Ակնհայտ է, որ Ազրամունտն անընդունակ է ապահովելու մեր կազմակերպության անդամների միջև հավասարակշռությունը իր մասնավոր գործունեության միջոցով, ով սպասարկում է միայն Ադրբեջանի կառավարության շահերը: Այսպիսով Ազրամունտն Ադրբեջանի շահերի մասնավոր սպասարկու է», – հայտարարել է ԱԺ փոխնախագահը:

Մելքունյանը իր հայտարարությունում անդրադարձել է նաև Ղարաբաղ-ադրբեջանական շփման գծում Ադրբեջանի հարձակմանը, որի հետևանքով հայկական կողմը ունեցավ կորուստներ:

«10 օր առաջ Ադրբեջանի հակամարդկային զինված հարձակման հետևանքով հայկական կողմը Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի սահմանին ունեցավ 4 զոհ, որոնք 20 տարեկան երիտասարդներ էին: Ո՛վ պետք է պատասխան տա զոհերի համար... Եվ ինչպե՞ս պետք է պատասխան տա: Միաժամանակ, զգուշացնում եմ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանական ուժերը միշտ էլ համարժեք պատասխան են տալու նմանօրինակ ստոր և ագրեսիվ գործողություններին: Ըստ երևույթին, Ալիևը դասեր չի քաղել անցած փորձից: Իհարկե, մենք կարծում ենք, որ այս երևույթին պետք է տրվեն քաղաքական և իրավական գնահատականներ և հետևեն կոնկրետ միջոցառումներ: Ցավոք սրտի, ուղղակի, թե անուղղակի, այս գործընթացին մասնակից է Պեդրո Ազրամունտը, և ես չեմ հասկանում՝ նա Ադրբեջանի կառավարության համար խոշոր միասիոներ է, թե խորհրդարանական վեհաժողովի կառավարիչ: Դա թողնում եմ ձեր դատին: Իմ եզրակացությունը միակն է. Ազրամունտը պետք է թողնի խորհրդարանական վեհաժողովի նախագահի պաշտոնը և հեռանա», – հայտարարել է Միքայել Մելքունյանը:

Արփինե Հովհաննիսյանն ընտրվել է ԵԽԽՎ փոխնախագահ

26.06.2017



Ստրասբուրգում այսօր՝ հունիսի 26-ին մեկնարկած Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ամառային նստաշրջանում կառույցի փոխնախագահի պաշտոնում ընտրվել է ԵԽԽՎ-ում ՀՀ պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի փոխնախագահ Արփինե Հովհաննիսյանը:

Նշենք, որ ԵԽԽՎ նախորդ նստաշրջանում Հայաստանի կողմից փոխնախագահի պաշտոնը զբաղեցնում էր Հերմինե Նադդայանը:

Հայաստանում այս տարվա ապրիլին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրություններից հետո ԵԽԽՎ-ում ՀՀ պատվիրակության կազմը փոփոխվել է:

Ավելի վաղ հայտնվել էր, որ հունիսի 26-ին մեկնարկել է ԵԽԽՎ ամառային նստաշրջանը, որը կտևի մինչև հունիսի 30-ը:

Մինչև հունիսի 30-ը նախանշված նստաշրջանի քննարկման հիմնական թեմաներն են լինելու Եվրոպան եւ միգրանտները:

Ներկայացվելու է չորս զեկույց. միգրացիոն ճգնաժամին մարդասիրական եւ քաղաքական պատասխանը, փախստականների տարանցմանը Եվրոպայի պատասխանից հետո մարդու իրավունքների հետ կապված իրադրության համար հետևանքները, միգրացիոն՝ որպես Եվրոպայի զարգացման հնարավորություն, կրիտիկական ճնշման ժամանակաշրջանում փախստականների ինտեգրումը:

Քննարկվելու են նաև ԵԽԽՎ-ում հաշվետվողականության սկզբունքին հետևելուն, քաղաքական կոռուպցիայի դեմ այսպարում արդարության խրախուսմանը եւ կոռուպցիայի խորհրդարանական վերահսկողությանը նվիրված հարցեր: Նախատեսվում են նաև քննարկումներ՝ նվիրված Բելառուսի իրադրությանը եւ անկախ լրագրողների ու լրատվամիջոցների նկատմամբ ճնշումներին:

Բեյզիացի սենատորը Արցախ է մեկնել

21.06.2017



Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը հունիսի 21-ին ընդունել է Բեյզիացի սենատոր, Ֆլանդրիայի խորհրդարանի անդամ Յորիս Պոշեին:

Քննարկվել են Բեյզիա-Արցախ խորհրդարանական կապերին վերաբերող մի շարք հարցեր:

Նախագահ Սահակյանը նշել է, որ երկու երկրների հարաբերությունների հետագա ընդլայնման ու խորացման համար կան խոստումնալից հիմքեր, այս համատեքստում կարելու էրթվ Բեյզիայի եւ նրա վարչական միավորումների քաղաքական, հասարակական, գիտակրթական, մշակութային եւ այլ շրջանակների ներկայացուցիչների հանախակի այցելությունները մեր հանրապետություն:

Ֆրանկ Էնգել. Ադրբեջանը սպառնալիքի որոշակի իմպուլս է պահպանում

Ղարաբաղյան հակամարտության գոտու շփման գծում հրադադարի ռեժիմի խախտումներով Ադրբեջանը փորձում է իր սեփական հասարակությանը ցույց տալ՝ վնաս ու կորուստ պատճառելու իր ունակությունները: Այս

մասին ասել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելը:



Անդրադառնալով ադրբեջանական կողմի վերջին սադրանքին՝ պատգամավորը նշել է, որ այստեղ ոչ մի նորություն չկա: «Ադրբեջանական կողմն պահպանում է սպառնալիքի որոշակի իմպուլս, ու դա կապակցված է «սպանված թշմանիների» հարցում գլուխ գովելու հետ: Ես նախկինի պես վստահ եմ, որ անհրաժեշտ է շփման գծում շտապ մոնիտորինգային մեխանիզմներ ստեղծել: Եվ ես հույս ունեմ, որ ԵԱՀԿ ՄԽ համառոտախազահները պնդում են դա՝ Ադրբեջանի իշխանությունների հետ խոսակցությունների ընթացքում», - շեշտել է Ֆրանկ Էնգելը:

Եվրախորհրդարանը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կոչ է արել

22.06.2017



Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն բանաձև է ընդունել Թուրքիայի վերաբերյալ, որտեղ կոչ է արել աշխատանքներ տանել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորելու ուղղությամբ: Բանաձևն ընդունվել է 51 կողմ, 3 դեմ եւ 14 ձեռնպահ ձայներով: Վերջնական քվեարկությունը տեղի կունենա հուլիսին, Եվրախորհրդարանի հաջորդ լիագումար նստաշրջանում:

Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն Թուրքիայում բարեփոխումների վերաբերյալ իր ամենամյա գնահատականում նշել է, որ 2016 թվականը ծանր տարի է եղել Թուրքիայի համար՝ կապված Սիրիայում պատերազմի հետևանքով փախստականների հոսքի, ահաբեկչությունների եւ պետական հեղաշրջման փորձի հետ: Կոմիտեն դատապարտել է հեղաշրջման փորձը եւ իր համերաշխությունը հայտնել Թուրքիայի ժողովրդին: Բանաձևում ընդգծվում է ԵՄ-Թուրքիա լավ հարաբերությունների կարելորությունը, բաց երկխոսությունը, որը առանցքային է ընդհանուր խնդիրները

լուծելու համար, որոնց թվում են միգրացիան, անվտանգությունն ու ահաբեկչության դեմ պայքարը: Եվրապատգամավորները առաջարկել են արդիականացնել ԵՄ-Թուրքիա հարաբերությունները, իսկ նոր համաձայնագրի հիմքում դնել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հարցը:

Այդուհանդերձ, Եվրախորհրդարանի պատգամավորները նշել են, որ հեղաշրջման փորձին ի պատասխան Թուրքիայի իշխանությունների ձեռնարկած միջոցները անհամաչափ են: Նրանք ափսոսանք են հայտնում, որ Թուրքիայում փակում են լրատվամիջոցներ, զանգվածաբար աշխատանքից ազատվում են պետծառայողներ, կալանավորվում են լրագրողներ, դատավորներ ու իրավապաշտպաններ, ինչպես նաեւ փակվում են դպրոցներ ու համալսարաններ:

Ի գիտություն ընդունելով Թուրքիայում վերջերս տեղի ունեցած հանրքավեն, որով ընդլայնվեցին նախագահի լիազորությունները, Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն կոչ է արել ԵՄ-ին անհապաղ պաշտոնապես դադարեցնել Թուրքիայի անդամակցության բանակցությունները, եթե Թուրքիայում բարեփոխումների սահմանադրական փաթեթը չփոփոխվի:

Կոմիտեն անհանգստություն է հայտնել Թուրքիայում մարդու իրավունքների, մամուլի ազատության եւ կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներում առկա իրավիճակով: Նրանք դատապարտել են Թուրքիայում մահապատիժը վերականգնելու Ռեջեփ Թայիփ Էրդոհանի մտադրությունը, ինչը կհանգեցնի ԵՄ-ին անդամակցության բանակցությունների անհապաղ դադարեցմանը:

Բանաձևի ուղղումներից մեկում պատգամավորները կոչ են անում Թուրքիային եւ Հայաստանին աշխատանքներ տանել հարաբերությունների կարգավորման ուղղությամբ եւ նշում, որ հայ-թուրքական սահմանի բացումը կարող է հանգեցնել հարաբերությունների կարգավորման:

«Չնայած բոլոր ներքին տարաձայնություններին, Եվրախորհրդարանը միակարծիք է, երբ խոսքը վերաբերում է Թուրքիայում մարդու իրավունքների խախտումներին:

Արտակարգ դրության շարունակումը անհամաչափ բացասական ազդեցություն է ունենում թուրք հասարակության վրա: Հազարավոր մարդկանց, այդ թվում պատգամավորների, քաղաքապետների կամայական կալանավորումները խիստ անհանգստացնող են», - ասել է հոլանդացի պատգամավոր Քայթի Փիրին ու հավելել:

Եվրախորհրդարանը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կոչ է արել

22.06.2017

Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն բանաձև է ընդունել Թուրքիայի վերաբերյալ, որտեղ կոչ է արել աշխատանքներ տանել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորելու ուղղությամբ: Բանաձևն ընդունվել է 51 կողմ, 3 դեմ եւ 14 ձեռնպահ ձայներով: Վերջնական քվեարկությունը տեղի կունենա հուլիսին, Եվրախորհրդարանի հաջորդ լիագումար նստաշրջանում:

Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն Թուրքիայում բարեփոխումների վերաբերյալ իր ամենամյա գնահատականում նշել է, որ 2016 թվականը ծանր տարի է եղել Թուրքիայի համար՝ կապված Սիրիայում

պատերազմի հետեւանքով փախստականների հոսքի, ահաբեկչությունների եւ պետական հեղաշրջման փորձի հետ: Կոմիտեն դատապարտել է հեղաշրջման փորձը եւ իր համերաշխությունը հայտնել Թուրքիայի ժողովրդին: Բանաձեւում ընդգծվում է ԵՄ-Թուրքիա լավ հարաբերությունների կարեւորությունը, բաց երկխոսությունը, որը առանցքային է ընդհանուր խնդիրները լուծելու համար, որոնց թվում են միգրացիան, անվտանգությունն ու ահաբեկչության դեմ պայքարը: Եվրապատգամավորները առաջարկել են արդիականացնել ԵՄ-Թուրքիա հարաբերությունները, իսկ նոր համաձայնագրի հիմքում դնել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հարցը:

Այդուհանդերձ, Եվրախորհրդարանի պատգամավորները նշել են, որ հեղաշրջման փորձին ի պատասխան Թուրքիայի իշխանությունների ձեռնարկած միջոցները անհամաչափ են: Նրանք ափսոսանք են հայտնում, որ Թուրքիայում փակում են լրատվամիջոցներ, զանգվածաբար աշխատանքից ազատվում են պետառաջնորդներ, կալանավորվում են լրագրողներ, դատավորներ ու իրավապաշտպաններ, ինչպես նաեւ փակվում են դպրոցներ ու համալսարաններ:

Ի գիտություն ընդունելով Թուրքիայում վերջերս տեղի ունեցած հանրապետական, որով ընդլայնվեցին նախագահի լիազորությունները, Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեն կոչ է արել ԵՄ-ին անհապաղ պաշտոնապես դադարեցնել Թուրքիայի անդամակցության բանակցությունները, եթե Թուրքիայում բարեփոխումների սահմանադրական փաթեթը չփոփոխվի:

Կոմիտեն անհանգստություն է հայտնել Թուրքիայում մարդու իրավունքների, մամուլի ազատության եւ կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներում առկա իրավիճակով: Նրանք դատապարտել են Թուրքիայում մահապատիժը վերականգնելու Ռեջեփ Թայիփ Էրդողանի մտադրությունը, ինչը կհանգեցնի ԵՄ-ին անդամակցության բանակցությունների անհապաղ դադարեցմանը:

Բանաձեւի ուղղումներից մեկում պատգամավորները կոչ են անում Թուրքիային եւ Հայաստանին աշխատանքներ տանել հարաբերությունների կարգավորման ուղղությամբ եւ նշում, որ հայ-թուրքական սահմանի բացումը կարող է հանգեցնել հարաբերությունների կարգավորման:

«Չնայած բոլոր ներքին տարաձայնություններին, Եվրախորհրդարանը միակարծիք է, երբ խոսքը վերաբերում է Թուրքիայում մարդու իրավունքների խախտումներին: Արտակարգ դրության շարունակումը անհամաչափ բացասական ազդեցություն է ունենում թուրք հասարակության վրա: Հազարավոր մարդկանց, այդ թվում պատգամավորների, քաղաքապետների կամայական կալանավորումները խիստ անհանգստացնող են», -ասել է հոլանդացի պատգամավոր Զաթի Փիրին ու հավելել. «Բանի որ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների փաթեթը չի համապատասխանում ԵՄ անդամության չափանիշներին, գեկույցը կոչ է անում պաշտոնապես դադարեցնել Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության բանակցությունները, եթե Թուրքիան շարունակի այդ փոփոխությունները: Մենք հույս ունենք, որ Թուրքիայի կառավարությունը լրջորեն կընդունի Վենետիկի հանձնաժողովի առաջարկները, ինչպես նաեւ այն փաստը, որ Թուրքիայի բնակչության կեսը դեմ է քվեարկել հանրաքվեի ժամանակ»:

Արեւմտյան Հայաստան

Անձր որոշ բաների հետ նույնանում է. Սահակ Եպիսկոպոս Մաշայանը՝ Արամ Աթեշյանի եւ 07.06.2017

Ժողովուրդը պետք է ընտրություն կատարի եւ հասկանա՝ արդյոք կցանկանա Պոլստ Հայոց պատրիարքի պաշտոնում կրկին տեսնել Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին: Այս մասին այսօր՝ հունիսի 7-ին, NEWS.am-ի հետ զրույցում ասաց Սահակ Եպիսկոպոս Մաշայանը՝ նշելով, որ Պոլստ պատրիարքի ընտրություններում թեկնածուներն առաջադրելը արքեպիսկոպոս Աթեշյանի կամքն ու իրավունքն է եւ միայն նա է պատասխանատու այդ որոշման համար:

«Անձր որոշ բաների հետ նույնանում է եւ ժամանակի ընթացքում դրանք նրա կյանքի իմաստն է դառնում՝ ձիքքը, տիտղոսը եւ հիմա էլ սրբազան Արամ Աթեշյանի իրավունքն է՝ դնել իր թեկնածությունը, այս պարագայում ժողովուրդը պետք է կատարի իր ընտրությունը: Այլ բան է, որ ժողովրդի մեծ մասը գոհ չէ այս որոշումից, սակայն, Արամ Սրբազանն էլ թեկնածությունը դնելու իրավունք ունի եւ այս հարցում ինքն է պատասխանատու», - ասաց նա:

Սահակ Եպիսկոպոս Մաշայանի խոսքով, հայտնի են Պոլստ պատրիարքի հավանական թեկնածուներից միայն 4-ի անունները, սակայն, կա 7 եկեղեցական, որոնք իրավունք ունեն իրենց թեկնածությունն առաջադրելու: Թե հայտնի որ թեկնածուներից ավելի մեծ շանսեր որ մեկն ունի, Սրբազանը անուն չտվեց՝ նշելով, որ ժողովուրդը պետք է ընտրություն կատարի:

«Պոլստ պատրիարքի հավանական թեկնածուների անուններ կան արդեն, այժմ թեկնածուի անունը կրող 7 եկեղեցական ունենք, բայց դեռ 4-ի անունն է հայտնի, որոնցից մեկը ես եմ, մյուսը՝ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյան, սրբազան Արամ Աթեշյանն ու սրբազան Սեպուհ Չուլջյանը: Հստակ չգիտենք, թե երբ տեղի կունենան ընտրությունները, սակայն, մինչև տարեվերջ արդեն նոր պատրիարքին ընտրած կլինենք: Նախ պետք է ընտրությունները նախաձեռնող մարմին կազմվի, որի ներկայացուցիչների մեծ մասն աշխարհականներ կլինեն: Պատրիարքի ընտրությունները պետք է ժողովրդական ընտրություններ լինեն, պետք է թեկնածուների ընտրարշավ սկսվի եւ այս ամեն ինչը առնվազն 4-5 ամիս կտևի», - ասաց նա:

Սահակ Եպ. Մաշայանը նշեց, որ հայ եկեղեցին իրավունք չունի պատրիարքի թեկնածուներից որեւէ մեկին նախապատվություն տալու, քանի որ ընտրությունը պետք է ժողովուրդը կատարի. «Որպես եկեղեցի թեկնածուներից ինչ-որ մեկին առաջարկել, կամ նախընտրել, չի կարելի, սակայն, եկեղեցականներն իրենց սրտում անպայման իրենց նախընտրած թեկնածուն կարող են ունենալ: Հայ առաքելական եկեղեցին այս առումով կամք չի հայտնել, նույնիսկ Վեսահափառը բացեիրբաց իր կամքը չի հայտնել՝ ժողովրդի կամքը հարգելու համար»:

Սրբազանը նաեւ նշեց, որ այժմ Պոլստ պատրիարքի տեղապահի պաշտոնը ստանձնած Գերմանիայի հայ թեմի առաջնորդ Գարեգին Բեքչյանին այժմ փոխարինում է նրա օգնական հայր Սերոբե Իսախանյանը եւ Գերմանիայի թեմի առաջնորդի ընտրությունները տեղի կունենան 6 ամիս անց. «Հայր Սերոբ Իսախանյանը գործերն արդեն վարում է,

իսկ 6 ամիս անց արդեն թեմական ընտրություն պետք է կատարվի եւ պարզ կլինի, թե ով կլինի Գերմանիայի թեմի առաջնորդը: Ընտրությունը կրկին ժողովուրդն է կատարելու»:

Ավելի վաղ տեղեկացվել էր, որ Պոլսո չայոց պատրիարքի փոխանորդի պաշտոնը զբաղեցնող Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը մայիսի 24-ին հրաժարական է տվել:

Թուրքիայի մեջլիսի հայ պատգամավոր Սելինա Դողանն այցելել է պատրիարքական տեղապահ Բեքյանին

15:12, 29.06.2017



Թուրքիայի մեջլիսում քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունից ընտրված հայ պատգամավոր Սելինա Դողանը Պոլսո չայոց պատրիարքարանում այցելել է պատրիարքական տեղապահ Գարեգին արքեպիսկոպոս Բեքյանի հետ:

Դողանը այս մասին գրել է Facebook-ի իր էջում, նշելով. «Տեղապահի պաշտոնը ստանձնած Սրբազան Գարեգին արքեպիսկոպոս Բեքյանին շնորհավորեցի՝ այցելելով նրան: Զննարկումներ ունեցանք օրակարգային զարգացումների շուրջ: Ցանկանում եմ, որ պատրիարքի ընտրությունը մեր երկրի ու համայնքի համար բարի լինի»:

Ավելի վաղ հայտնվել էր, որ Պոլսո չայոց պատրիարքարանի եկեղեցական ընդհանուր ժողովը հունիսի 28-ին որոշում է կայացրել դադարեցնել Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի լիազորությունները որպես պատրիարքական փոխանորդ: Որոշումը կայացվել է 22 կողմ եւ 2 դեմ եւ 1 ձեռնպահ ձայներով:

Պատրիարքի տեղապահ ընտրված Գարեգին արքեպիսկոպոս Բեկյանը նախ կոչ է արել Արամ Աթեշյանին ներկայացնել իր հրաժարականի գրավոր դիմումը՝ որպեսզի Պատրիարքական ընտրությունները ունենան առողջ գործընթաց եւ կանխվեն հավանական սխալ հասկացողությունները: Մինչդեռ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը հայտարարել էր, որ մտադիր չէ հրաժարական ներկայացնել:

Ամենայն հավանականությամբ Պոլսո պատրիարքի ընտրությունները տեղի կունենան այս տարվա աշնանը:

Պոլսո չայոց պատրիարքարանը մանրամասներ է հայտնել Արամ Աթեշյանին իր պաշտոնից հեռացնելու վերաբերյալ 12:36, 29.06.2017



Պոլսո չայոց պատրիարքարանը պաշտոնական գեկույցով վերահաստատել է պատրիարքարանի եկեղեցական խորհրդի կողմից Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին պաշտոնանկ անելու մասին լուրն ու որոշ մանրամասներ ներկայացրել տեղի ունեցած ժողովից:

Պոլսո չայոց պատրիարքարանից հայտնում են, որ պատրիարքի տեղապահ ընտրված Գարեգին արքեպիսկոպոս Բեկյանը Եկեղեցական ընդհանուր ժողովի ընթացքում մանրամասներ է ներկայացրել իր եւ Աթեշյանի հանդիպման մասին:

Նա կոչ է արել Արամ Աթեշյանին ներկայացնել իր հրաժարականի գրավոր դիմումը՝ որպեսզի Պատրիարքական ընտրությունները ունենան առողջ գործընթաց եւ կանխվեն հավանական սխալ հասկացողությունները:

Գարեգին արքեպիսկոպոս Բեկյանի խոսքով, կայանալիք Եկեղեցական ընդհանուր Համագումարը պիտի քննարկի այս խնդիրը եւ որոշում կայացնի, ուստի ինքը Արամ Աթեշյանին առաջարկել է կամավոր գրավոր հրաժարական ներկայացնել՝ հանուն համերաշխության:

Մինչդեռ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը հայտարարել է, որ մտադիր չէ հրաժարական ներկայացնել:

Դրանից հետո, Եկեղեցական ընդհանուր համագումար ժողովը, կատարված քվեարկությամբ 22 կողմ, 2 դեմ եւ 1 ձեռնպահ քվեով վավերացրել է համապատասխան բանաձեռը, ըստ որի դադարեցրել է Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը լիազորությունները որպես պատրիարքական ընդհանուր փոխանորդ:

Հիշեցնենք, որ 2016-ի հոկտեմբերի 26-ին Եկեղեցական ընդհանուր համագումար ժողովը հաստատել էր, որ Պատրիարքական այթոռը թափուր է (Պոլսո պատրիարք Մեսրոպ Մույսաֆյանը կոմայի մեջ է գտնվում 2008թ.-ից եւ փաստացի չի կարող կատարել պատրիարքի իր լիազորությունները):

2017-ի մարտի 15-ին, Եկեղեցական Ընդհանուր Համագումար ժողովի որոշմամբ, թափուր մնացած Աթոռի տեղապահ է ընտրվել Գարեգին արքեպիսկոպոս Բեկյանը:

Եկեղեցական ընդհանուր համագումար ժողովի ընդունած բանաձեռում, մասնավորապես, ասվում է.

«Նկատի ունենալով տեղապահի ընտրություն կատարված լինելը, եւ մեր հնավանդ եկեղեցական կանոնների ուղղությամբ նոր Պատրիարքի ընտրությունը, թե վարչական եւ թե ներկայացուցչական առումով Պատրիարքական Աթոռի լիազորն է Տեղապահ Սրբազան չայոց: Եկեղեցական հնավանդ կանոններուն համաձայն Տեղապահի ընտրությամբ ավարտվել է Ընդհանուր Փոխանորդի պաշտոնի պահանջը: Ուստի քնականորեն ավարտվել է Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդի պաշտոնը:

Եկեղեցական Համագումար Ժողովը, որպեսզի Պատրիարքական Ընտրության գործընթացի մեջ կանխվեն հավանական սխալ հասկացողությունները, հունիսի 28-ին, ժողովում քվեարկությամբ հաստատում է, որ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանն այլևս Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ չէ եւ ազատված է ընդհանուր փոխանորդի իրավասություններից ու պատասխանատվություններից»:

Թուրքիայում Մարդինի նահանգապետի կինն այցելել է հայկական եկեղեցի

24.06.2017



Թուրքիայի հարավ-արեւելյան Մարդինի նահանգապետի կինը այցելել է Դերիկում միակ կանգուն մնացած հայկական Սուրբ Գեւորգ եկեղեցի:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Մարդինի նահանգապետի կինը Գյուլսերեմ Յամանը նահանգապետարանի աշխատակազմի հետ այցելել է Դերիկի հայկական Սուրբ Գեւորգ եկեղեցի:

Նահանգապետի կինը եկեղեցի այցի ընթացքում գրուցել է իր միջոցներով ինքնակամ հայկական եկեղեցու պահպանությամբ ու խնամքով զբաղվող Հաթուն Գյոնգուրուրի հետ:

Սփյուռք

Մոսկվայում ընտրվել է ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի նոր ղեկավարությունը

12.06.2017

Օրերս Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդում ընդգրկված կազմակերպությունների ղեկավարները հանդիպում են անցկացրել Մոսկվայում, որտեղ ընտրվել է ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի նոր ղեկավարությունը:

Կազմակերպությունից հայտնում են, որ այդ հանդիպմանը խորհուրդը մասնավորապես, քննարկել է ոչ միայն իրենց գործունեության հաջողություններն ու ձեռքբերումները,

այլև հիմնական խնդիրները, որոնք հուզում են հասարակությանը:



«Իր գործունեության մեկ տարվա ընթացքում Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը վերածվել է Ռուսաստանի հայերի շահերի պաշտպանության ակտիվ պայքարի առաջամարտիկի, իսկ Խորհրդի տեղեկատվական հովանավորը՝ russia-armenia.info կայքն է որը ղեկավարում են Արամ Խաչատրյանն ու Ալեքսանդր Երկանյանը:

Ելույթ ունեցողները նշել են, որ Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը իր ներդրումն է ունենում եւ կշարունակի ունենալ հայ-ռուսական բազմադարյա բարեկամության ամրապնդման գործում, նպաստելու է ռուսական հասարակության տարբեր շերտերի միջև փոխգործակցության զարգացմանը, անելու է հնարավոր ամեն բան Ռուսաստանի կյանքում հայ համայնքի մեծ դերի մասին արժանահավատ տեղեկատվության տարածմանը թե նախկինում, թե հիմա: Հանդիպման մասնակիցները սկայայով ուղիղ կապ են հաստատել Ռուսաստանի այլ տարածաշրջաններում գտնվող իրենց գործընկերների հետ:

Հանդիպման մասնակիցների որոշմամբ ձեւավորվել է նոր պաշտոն՝ Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի գլխավոր քարտուղար: Այդ պաշտոնում ընտրվել է Արամ Խաչատրյանը, իսկ պատասխանատու քարտուղար է ընտրվել Ալեքսանդր Երկանյանը», -ասված է տարածված հաղորդագրության մեջ: Նշենք, որ Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդում ընդգրկված են հայ համայնքը ներկայացնող 25 կազմակերպություններ:

Ամերիկուհին գտել է շեյխի ընտանիքին, որը նրա պապիկին փրկել է Հայոց ցեղասպանության ժամանակ

Դոուն Անահիտ ՄակՔինը՝ «Հայրուրամյա ճանապարհ. Հայկական ողիսական» գրքի հեղինակը, գտել է արաբ բեդվին Շեյխ ալ Աեքլեհի ժառանգներին, ով Հայոց ցեղասպանության տարիներին օգնել է իր պապիկի՝ Ստեփանի փրկությանը: Այս մասին Անահիտը հայտնել է BBC-ի կայքում հրապարակված իր հոդվածում:

Արաբ Շեյխ ալ Աեքլեհը եւ նրա ընտանիքը ընդունել է իր պապիկին, որը հսկողությունից փախել էր: Ստեփանը իր փրկության պատմությունը եւ ընտանիքին, որն իրեն ապաստան է տրամադրել, մանրամասն նկարագրել է գրառումներում, որը նրա ընտանիքը վերջերս է հայտնաբերել:



Անահիտը հողվածում նկարագրում է պապիկի գրառման հետքերով իր ճանապարհորդությունը: Միրիայում նա հանդիպել է այն ընտանիքին, որն իր պապիկին տանիքով էր ապահովել: Նա մանրամասն նկարագրում է Շեյխ ալ Աեբլեհի ժառագների ընտանիքի եւ նրա ծոռնուհու հետ իր հանդիպումը:



Առաջին անգամ է, որ Ֆրանսիայի խորհրդարանը 3 հայ պատգամավոր ունի. Արա Թորանյան

19.06.2017

Առաջին անգամ է, որ Ֆրանսիայում միանգամից երեք հայ է պատգամավոր ընտրվում: Այս մասին ասաց Ֆրանսիայում հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահ Արա Թորանյանը:

«Գոհ եմք, ուրախ եմք, որ հայ պատգամավոր ունենք խորհրդարանում, սա նշանակում է, որ հայերն ակտիվ մասնակցություն ունեն երկրի քաղաքական կյանքում, հատկապես հաշվի առնելով, որ իշխանության մեջ են», - ասաց նա:

Արա Թորանյանի խոսքով, միայն երկրի նախագահ Էմանուել Մակրոնի «Հառաջ Հանրապետություն» կուսակցությունում կային հայ թեկնածուներ:

«Ընտրված պատգամավորներից միայն Դանիել Կազարյանն է, որը հայկական համայնքում ակտիվություն է ցուցաբերել, մյուսները մեզ անծանոթ են», - ասաց Արա Թորանյանը:

Նշենք, որ հունիսի 18-ին Ֆրանսիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում 3 հայ պատգամավոր է ընտրվել: Փարիզի արվարձան Սեն Կլոուսում հաղթանակ է տարել Ժակ Մարիլոյանը: Էր եւ Լուար դեպարտամենտի (Ֆրանսիայի կենտրոնական մասի հյուսիսում) առաջին օկրուգում հաղթանակ է տարել Գիյոմ Կասարյանը, իսկ Լիոնում հաղթել է Դանիել Կազարյանը:

Կիպրոսի հայերը կցանկանային գրանցված համայնք դառնալ

, 26.06.2017



Կիպրոսի հայերը կցանկանային դառնալ պաշտոնապես գրանցված համայնք, այլ ոչ թե կրոնական խումբ: Այս մասին Cyprus News Agency-ին տված հարցազրույցում ասել է Կիպրոսի խորհրդարանի պատգամավոր Վարդգես Մահդեյանը:

Սակայն նրա խոսքով հիմա դրա համար հարմար պահ չէ: «Մենք ու անձամբ ես, չենք ձգտում սահմանադրական փոփոխությունների հենց հիմա, քանի որ ամեն ինչ արդեն իսկ բարդացած է կիպրոսյան խնդրով ու ես չեմ ուզում ավելի շատ բարդացումներ հավելել», - նշել է նա :

Մահդեյանը շեշտել է, որ չնայած հայերը խորհրդարանում տեղեր ունեն, նրանք այնուամենայնիվ չեն կարողանում քվեարկել կամ էլ օրինագծեր ներկայացնել:

Կիպրոսի հայկական համայնքի հիմնական խնդիրներից մեկն է ավանդույթների, մշակույթի, լեզվի ու կրոնի պահպանումը: Շատ հայեր չեն կարողանում աշխատանք ստանալ պետական ոլորտում, բանակում լեզվական խոչընդոտի պատճառով: Կիպրոսի պաշտոնական լեզուներն են հուններենն ու թուրքերենը:

Մահդեյանի խոսքով, հայոց լեզվի ուսումնասիրությունը նվազ պահանջված է դառնում համայնքի ներկայացուցիչների կողմից: Շատ ծնողներ կասկածում են՝ արդյոք իմաստ ունի իրենց երեխաներին հայկական դպրոցներ ուղարկել, քանի որ դա կարող է ազդել նրանց ապագայի վրա:

Նշենք, որ Կիպրոսի կրոնական խմբերն են համարվում հայերը, մարոնիտներն ու կաթոլիկները:

Բիշքեկում «Արարատ» հայկական սփյուռքի տուն են բացել

26.06.2017



Բիշքեկում այսուհետ կգործի «Արարատ» հայկական սփյուռքի տունը: Այն բացել են այսօր՝ Դրզգստանի ժողովուրդների մայրաքաղաքային վեհաժողովի շենքում, հաղորդում է «Միր 24» հեռուստաալիքը:

Այժմ հայկական սփյուռքը պաշտոնապես է գրանցվել: Ղրղզստանի տարածքում ավելի քան 700 հայ է բնակվում բժիշկներ, երաժիշտներ, խոշոր գործարաններ:

«Գաղտնիք չէ, որ Հայաստանի սահմաններից դուրս բնակվող հայերը ձգտում են դեպի սեփական հողը, լեզուն, մշակույթը: Կարծում եմ՝ սա կնպաստի նրան, որ Ղրղզստանում ծնված մեր երեխաները չմոռանան իրենց մշակույթն ու իմանան իրենց պատմությունը»,- ասել է Ղրղզստանում հայ համայնքի ներկայացուցիչ Եվգենի Հակոբյանը:

Տանը կարող են հավաքվել նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ: Նրանց համար այստեղ կկազմակերպեն համերգներ, ցուցահանդեսներ, համաժողովներ

Միջազգային

Մոտ ապագայում Մերձավոր Արևելքում քրդական պետություն կստեղծվի. թուրքագետ 12.06.2017



Մոտ ապագայում Մերձավոր Արևելքում քրդական պետություն կստեղծվի: Այս մասին հունիսի 12-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը: Նրա խոսքով՝ դա անդառնալի գործընթաց է: «Մենք մեծ ու բարդ գործընթացի ականատեսներ ենք դառնում: Դա Մերձավոր Արևելքում քրդական պետության ստեղծումն է: Այդ գործընթացը շարունակվում է եւ կշարունակվի մի քանի տարի»,-նշեց Սաֆրաստյանը: Ըստ նրա՝ Իրաքի հանրաքվեն կարող է տեղի ունենալ կամ չունենալ, սակայն կարելու է, որ գործընթացը շարունակվում է: «Աշխարհաքաղաքական տեսանկյունից դա Մերձավոր Արևելքում ամենակարևոր գործընթացն է: Մերձավոր Արևելքը տարբեր ուժային կառույցների շահերի բախման կենտրոնում է»,- ընդգծեց թուրքագետը: Նա հավելեց, որ Քրդական պետությունը կունենա մեծ տարածք, մեծ թվով ազգաբնակչություն եւ հարուստ բնական ռեսուրսներ, ներառյալ՝ էներգետիկ ռեսուրսները, ինչը կհանգեցնի տարածաշրջանում նոր բախումների:

Ավելի վաղ Իրաքի Քուրդիստանի նախագահի օգնականը հայտարարել է, որ 2017 թվականի սեպտեմբերի 25-ին անկախության հանրաքվե տեղի կունենա: Իրաքյան Քուրդիստանն ինքնավարություն է Իրաքի կազմում, կարգավիճակն ամրագրված է երկրի Սահմանադրությունում:

Ադրբեջանն ու Թուրքիան համատեղ զորավարություններ են անցկացնում



Ադրբեջանն ու Թուրքիան համատեղ մարտավարական զորավարություններ են անցկացնում՝ երկու երկրների զինված ուժերի տարբեր զորքերի մասնակցությամբ: Այս մասին հաղորդում է ադրբեջանական ԱՊԱ-ն՝ վկայակոչելով երկրի պաշտպանության նախարարությունը: Չորավարություններն անցկացվում են Նախիջևանի տարածքում: Դրանք կտեսն մինչև հունիսի 16-ը:

ԱՄՆ-ում 190 օրենսդիրներ Թրամփի դեմ դատական հայց են ներկայացրել

10:56, 14.06.2017



Վաշինգտոնի դատարանն են դիմել ամերիկացի ավելի քան 190 դեմոկրատ օրենսդիրներ՝ դատական հայց ներկայացնելով նախագահ Դոնալդ Թրամփի դեմ: Նրանք Թրամփին մեղադրում են երկրի Սահմանադրության դրույթները խախտելու մեջ, հաղորդում է Reuters-ը:

